



Եվրոպական միության «Երևանի պետական համալսարանում  
Եվրոպական և միջազգային իրավունքի և եվրոպական իրավունքի և  
ինտեգրման կենտրոնի ստեղծում և ԳՀՀ մասին  
իրագելության բարձրացում» ծրագիր Հայաստանում

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ և ԻՆՏԵԳՐԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հայաստանի տնտեսությունը Կոպենհագենի  
տնտեսական չափանիշների տեսանկյունից

Վերլուծություն



Ծրագիրը ֆինանսավորվում է  
Եվրոպական միության կողմից



Ծրագիրն իրականացվում է  
GOPA Խորհրդատվական  
ընկերության կողմից

# Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոն



Գրիգոր Հայրապետյան, Վարդան Բաղդասարյան

## Հայաստանի տնտեսությունը Կոպենհագենի տնտեսական չափանիշների տեսանկյունից

Վերլուծություն

Սույն հրատարակումն իրականացվել է Եվրոպական միության աջակցությամբ: Հրատարակման բովանդակության համար պատասխանատու է միայն Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնը և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:



Ծրագիրը ֆինանսավորվում է  
Եվրոպական միության կողմից



Ծրագիրն իրականացվում է  
GOPA Խորհրդատվական  
ընկերության կողմից

## Բովանդակություն

Ներածություն.....	3
1. Կոպենհագենի չափանիշների էությունը.....	4
1.1 Կոպենհագենի տնտեսական չափանիշների մեկնաբանումը.....	5
1.2 Չափանիշների գնահատման և համեմատական վերլուծության մոտեցումները .....	8
2. ՀՀ տնտեսության որոշ հատվածների համեմատական վերլուծություն .....	10
2.1 Սեփականաշնորհման գործընթաց .....	12
2.2 Աշխատուժի շուկա և «գիտելիքի վրա հիմնված» տնտեսություն.....	16
2.3 Ֆինանսական հատված .....	22
3 Ինստիտուցիոնալ միջավայր.....	33
3.1 Օրենքի գերակայություն և պայմանագրերի կատարման պարտադրում .....	38
3.2 Մրցակցային միջավայրի ապահովում .....	41
3.3 Ընդհանուր Բինգես միջավայրի ինստիտուցիոնալ հիմքեր .....	42
4. ԵՄ անդամակցության պատրաստվածության գնահատման ինդեքս.....	44
Վերջաբան.....	46
Օգտագործված գրականություն .....	49

## Ներածություն

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել ՀՀ տնտեսության հիմնական խնդիրները ԵՄ անդամակցության համար պահանջվող տնտեսական զարգացման մակարդակին ներկայացվող պահանջներին բավարարելու տեսանկյունից: Այդ նպատակով հետազոտությունում ներկայացվել է Կոպենհագենի չափանիշների էությունը, վերլուծվել է ՀՀ տնտեսության տարբեր հատվածների ներկայիս վիճակը՝ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրների հետ համեմատության մեջ և բացահայտվել են ՀՀ տնտեսության երկարաժամկետ զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնները: Այստեղ հարկ է նշել, որ աշխատանքում դիտարկվել է Կոպենհագենի չափանիշների միայն տնտեսական կողմը, այդ պատճառով վերլուծությունը չի կարող համարվել ԵՄ անդամակցության հնարավորությունների ամբողջական ուսումնասիրություն:

Աշխատանքը բաղկացած է երեք մասից: Առաջին մասում ներկայացված է Կոպենհագենի չափանիշների էությունը և մեկնաբանությունը: Հետազոտության մեջ Հայաստանի հետ համեմատության համար ընտրվել են Ալբանիան, Մակեդոնիան, Բոսնիան ու Հերցեգովինան, Ռումինիան և Բուլղարիան: Ըստ էության ընտրված երկրները կազմում են երեք խումբ. պոտենցիալ թեկնածու, թեկնածու և ԵՄ նոր անդամ պետություններ: Այս երկրների հետ համեմատական վերլուծությունը թույլ կտա բացահայտել, թե ներկայումս Հայաստանն իր տնտեսական զարգացման մակարդակով ո՞ր խմբին է ավելի մոտ:

Հետազոտության երկրորդ մասում ներկայացված է Հայաստանի մակրոտնտեսական զարգացումների վերլուծությունը և համեմատությունը նշված երկրների հետ: Մասնավորապես հատուկ ուշադրություն է դարձվել սեփականաշնորհման գործընթացին, աշխատուժի շուկային, ֆինանսական շուկային և արտաքին առևտրին: Հատվածների ընտրությունը պայմանավորված է Կոպենհագենի տնտեսական չափանիշների մեկնաբանությամբ:

Աշխատանքի երրորդ մասում ներկայացված է ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրը՝ կրկին համեմատության մեջ: Եվ վերջապես աշխատանքն ամփոփվում է ԵՄ անդամակցության պատրաստվածության գնահատման ինդեքսի ներկայացմամբ:

## 1. Կոպենհագենի չափանիշների էությունը

ԵՄ ընդլայնման հիմնական պայմաններն ամրագրված են Եվրոպական Ընկերակցության հիմնադիր պայմանագրի 49 հոդվածում, համաձայն որի ցանկացած եվրոպական երկիր կարող է Միության անդամ դառնալու դիմում ներկայացնել: Նախ, երկիրը պետք է դիմումն ուղարկի Եվրոպական խորհուրդ, որը Եվրոպական հանձնաժողովի հետ խորհրդակցելուց և Եվրոպական խորհրդարանից համաձայնություն ստանալուց հետո պետք է գործին ընթացք տա: Սկզբունքորեն ԵՄ անդամակցության հետ առնչվող միակ նյութական պայմանը դա այն է, թե արդյո՞ք դիմորդ երկիրը եվրոպական երկիր է, թե ոչ: Այստեղ ամբողջ հարցը կայանում է նրանում, որ «եվրոպական» տերմինը պաշտոնապես չի սահմանվել: Ուստի այն մեկնաբանվում է աշխարհագրական, մշակութային և պատմական առումներով: Սակայն, քանի որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներն իրենց մտադրությունը հայտնեցին դառնալու ԵՄ անդամ երկրներ, ապա ԵՄ պետք է սահմաներ քաղաքական և տնտեսական արժեքներ, որոնք ընդհանուր են բոլոր «եվրոպական երկրների» համար:

Պայմանները, որոնց թեկնածու երկրները պետք է բավարարեն նախքան անդամակցությունը, ամրագրված են Եվրոպական հանձնաժողովի 1993թ. «Եվրոպան և ընդլայնման մարտահրավերը» զեկույցում: Անդամակցությունը տեղի կունենա, երբ թեկնածու երկիրն ի վիճակի կլինի կատարել անդամակցության պարտավորությունները՝ բավարարելով սահմանված քաղաքական և տնտեսական պայմանները: ԵՄ անդամ երկրները սահմանել են նաև «որակական» չափանիշներ անդամակցության համար՝ այսպես կոչված Կոպենհագենի չափանիշներ: Համաձայն Կոպենհագենի գազաթափովի ԵՄ անդամակցությունը պահանջում է.

1. կայուն ինստիտուցիոնալ համակարգի հաստատում, որը պետք է ապահովի ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, մարդու իրավունքների և ազգային փոքրամասնությունների պաշտպանություն (քաղաքական չափանիշ),
2. գործող շուկայական տնտեսություն, ինչպես նաև ԵՄ շրջանակներում մրցակցային ճնշմանը և շուկայի ուժերին դիմակայելու ընդունակություն (տնտեսական չափանիշ),
3. անդամակցության պարտավորությունները կրելու ընդունակություն, այսինքն՝ ընդունել ընդհանուր օրենքներ, ստանդարտներ և քաղաքականություններ, որոնք կազմում են ԵՄ իրավունքի հիմնական մասը («acquis» չափանիշ):

Ակնհայտ է, որ Կոպենհագենի չափանիշները շատ ընդհանրական են ձևակերպված: Առաջին հայացքից կարող է թվալ, որ ի տարբերություն հատկորեն սահմանված Մասատրիխտի չափանիշների, շատ հեշտությամբ կարելի է բավարարել Կոպենհագենի չափանիշները: Սակայն ընդհանրական ձևակերպումն ավելի շատ տեղ է թողնում սուբյեկտիվ գնահատականների համար: Այստեղ հարկ է նաև նշել, որ ԵՄ իրավունք ունի վերանայել և փոփոխել անդամակցության պայմանները: Եվ որ ամենակարևորն է, չպետք է մոռանալ, որ ցանկացած ընդլայնման գործընթացում վերջնական խոսքը ԵՄ անդամ պետություններինն է:

### **1.1 Կոպենհագենի տնտեսական չափանիշների մեկնաբանումը**

Թեկնածու երկրի անդամակցության տնտեսական պատրաստակամությունը գնահատելու նպատակով ԵՄ սահմանել է երկու խումբ տնտեսական չափանիշներ: Թեկնածու երկրները պետք է.

1. ունենան գործող շուկայական տնտեսություն,
2. լինեն մրցունակ ԵՄ շուկայում<sup>1</sup>:

Առաջին խմբի տնտեսական չափանիշների համաձայն երկիրը պետք է ունենա շուկայական տնտեսություն, որին պետք է բնորոշ լինի ազատ և բաց մրցակցությունը, գների ու առևտրի ազատականցումը և զարգացած ֆինանսական ծառայությունների ոլորտը:

Երկրորդ խմբի տնտեսական չափանիշները, համաձայն Եվրոպական հանձնաժողովի, բաղկացած են մրցակցային միջավայրի երկու ուղղություններից: Առաջին հերթին ձեռնարկությունները պարտավոր են զարգացնել իրենց կարողությունները այնպես, որ կարողանան դիմադրել մրցակցային ճնշմանը և ԵՄ ներքին շուկայի ուժերին: Երկրորդ հերթին, թեկնածու երկրի տնտեսությունը համեմատած ԵՄ անդամ երկրների տնտեսության հետ պետք է լինի բավարար մրցունակ:

Այստեղ հարկ է նշել, որ այս ենթաչափանիշները փոխկապակցված են: Այսպես, միայն գործող շուկայական տնտեսություն ունեցող երկիրը կարող է ավելի լավ դիմակայել մրցակցային ճնշմանը: Մյուս կողմից հավակնորդ երկրները նախքան անդամակցությունը պետք է բավարար չափով ինտեգրված լինեն ԵՄ շուկային: Առանց ԵՄ ներքին շուկային ինտեգրվելու ԵՄ անդամակցությունը կկորցնի իր տնտեսական իմաստը և՛ թեկնածու երկրի համար, և՛ ԵՄ անդամ երկրների համար:

---

<sup>1</sup> Rafat Antczak, Matgorzata Antczak “Bosnia and Herzegovina-Meeting Copenhagen Economic Criteria for Accession to the EU”, Warsaw 2007

Կոպենհագենի երրորդ չափանիշի՝ «Acquis communautaire», (մասնավորապես՝ ներքին շուկայի «acquis») ընդունումը և կիրառումը շատ կարևոր է թեկնածու երկրի համար: Սա ապահովում է վստահություն, որ ԵՄ ընդլայնված շուկայի ցանկացած մաս կշարունակի գործել համաձայն ընդհանուր օրենքների:

Պետության մակարդակում ԵՄ անդամակցությունը պահանջում է վարչական ու իրավական համակարգերի բարեփոխումներ և մի շարք տեխնիկական օրենսդրության կիրառում, որպեսզի ԵՄ ներսում վերացվի տեղաշարժի խոչընդոտները և ապահովվի մեկ ընդհանուր շուկայի աշխատանքը:

Չեռնարկությունների մակարդակում «acquis» կիրառման ազդեցությունը մրցունակության վրա կախված է նոր տնտեսական միջավայրին հարմարվելու դրանց ընդունակություններից:

Չնայած ԵՄ անդամ պետություններն ունեն չափանիշներն ազատ մեկնաբանելու առանձնահատուկ իրավունք, այնուամենայնիվ «շուկայական տնտեսություն» սահմանումը հիմնվում է կոնկրետ ցուցանիշների վրա, որոնք առաջ են քաշվել Եվրոպական հանձնաժողովի կողմից<sup>2</sup>: Համաձայն Եվրոպական հանձնաժողովի այդ ցուցանիշներն են.

1. բարեփոխումների ընդհանուր գործընթացի գնահատում, ներառյալ՝ սեփականաշնորման գործընթացը, պետության դերը տնտեսության և տնտեսական կառուցվածում,
2. գների և արտաքին առևտրի ազատականացում (բոլոր տեսակի առևտրային սահմանափակումների վերացում, ազգային արժույթի ամբողջական փոխարկելիության համար պայմանների ստեղծում),
3. շուկայի ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի և իրավական համակարգի հաստատում, ներառյալ՝ սեփականության իրավունքի կարգավորում, շուկա մուտք գործելու (նոր ձեռնարկությունների հիմնադրում) ու դուրս գալու (սնանկացում և լուծարում) արգելքների վերացում և ազատ մրցակցություն:
4. մակրոտնտեսական կայունության հաստատում (գների կայունացում, գնաճի կրճատում, ՀՆԱ-ի աճ, ՕՈՒՆ-ի ներհոսք, արտաքին առևտուր և կայուն պետական ֆինանսներ),
5. զարգացած ֆինանսական հատված, որը պետք է ուղղորդի խնայողությունները դեպի ներդրումներ:

---

<sup>2</sup> “Agenda 2000 communication, volume I: for wider and stronger Union”, European Commission, Strasbourg, 15 July 1997, DOC/97/6.

Շուկայական տնտեսության առկայությունն ենթադրում է տնտեսական հավասարակշռության (առաջարկ և պահանջարկ) հաստատում՝ ազատ շուկայական ուժերի ազդեցությամբ: Մասնավորապես գործող շուկայական տնտեսությունը պահանջում է, որպեսզի գները, ինչպես նաև առևտուրը լինեն ազատականցված և որպեսզի առկա լինի գործող իրավական համակարգ, ներառյալ՝ սեփականության իրավունքի պաշտպանություն: Մյուս կողմից մակրոտնտեսական կայունությունը խթանում է շուկայական տնտեսության զարգացմանը: Եվ վերջապես լավ զարգացած ֆինանսական համակարգը և շուկա մուտք գործելու և դուրս գալու որևէ էական արգելքների բացակայությունը բարելավում է տնտեսության արդյունավետությունը:

Համաձայն Եվրոպական հանձնաժողովի ԵՄ շրջանակներում մրցակցային ճնշմանը և ԵՄ ներքին շուկայի ուժերին դիմակայելու ունակությունը պահանջում է.

- հաստատել կայուն մակրոտնտեսական իրավիճակ,
- ապահովել մարդկային և ֆիզիկական կապիտալի բավարար մակարդակ, ներառյալ՝ ենթակառուցվածքը, կրթությունն ու հետազոտությունը և այս ոլորտում հետագա զարգացումը,
- պարզել, թե ինչպես է կառավարության քաղաքականությունը և օրենսդրությունն ազդում մրցունակության վրա առևտրային և մրցակցային քաղաքականությունների, պետական օժանդակության, փոքր և միջին ձեռնարկությունների օժանդակության և այլնի միջոցով,
- ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները տնտեսության մեջ փոքր և միջին ձեռնարկությունների բաժնի ավելացման համար,
- ապահովել ԵՄ հետ առևտրի ինտեգրման բարձր աստիճան (համաձայն Եվրոպական հանձնաժողովի, երկիրն ի վիճակի կլինի ավելի լավ կատարել անդամակցության պարտավորությունները, եթե նա մինչև անդամակցությունն ապահովում է բարձր տնտեսական ինտեգրման աստիճան ԵՄ հետ)
- վերակառուցել պետական և մասնավոր ձեռնարկությունները, բոլոր ձեռնարկությունները պետք է ներդրումներ կատարեն իրենց արդյունավետությունը բարձրացնելու համար (որքան ձեռնարկություններն արտաքին ֆինանսավորման հնարավորություններ ունեն և հաջողակ են վերակառուցման ու նորարարության մեջ, այնքան նրանց հարմարվելու ընդունակությունները մեծ կլինեն):



## 1.2 Չափանիշների գնահատման և համեմատական վերլուծության մոտեցումները

Նշված չափանիշների գնահատման միասնական մոտեցում գոյություն չունի: Սույն աշխատանքի սահմաններում մենք համեմատական վերլուծություն ենք իրականացրել ըստ վերը նշված տնտեսության հատվածների և ինստիտուցիոնալ միջավայրի հիմնական ցուցանիշների: Վերլուծությունն ու համեմատությունը կատարվել է միջազգային ֆինանսական կազմակերպությունների վիճակագրական տվյալների և տարբեր հետազոտությունների արդյունքների հիման վրա: Հետազոտության լայն օբյեկտը թույլ չի տալիս ապահովել խորության բարձր աստիճան, սակայն փոխարենը ներկայացված են կարևոր և զարգացման ներկա փուլում առավել խնդիրներ առաջացնող գործոնները:


**Աղյուսակ 1. Տնտեսական չափանիշները և դրանց գնահատման մոտեցումները**

Տնտեսական չափանիշներ	Գնահատման մոտեցումը		
Գործող շուկայական տնտեսություն	Մեփ. գործընթաց	Ֆինանսական շուկա	Արտաքին առևտուր
ԵՄ շուկայում մրցունակություն	ԵՄ հետ արտաքին առևտրի ինտեգրման աստիճան	Փոքր և միջին բիզնեսի դերը տնտեսությունում	Աշխատուժի շուկայի որակական կողմ

Աշխատանքում համեմատության և գնահատման համար մենք վերցրել ենք հետևյալ երկրները՝ Հայաստան, Ալբանիա, Մակեդոնիա, Բոսնիա և Հերցեգովինա, Ռումինիա ու Բուլղարիա: Այստեղ հարկ է նշել, որ վերը նշված բոլոր երկրները, բացի Հայաստանից համարվում են պոտենցիալ թեկնածու, թեկնածու կամ ԵՄ անդամ երկրներ<sup>3</sup>: Այս առումով նշված երկրները պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի (Տե՛ս գծանկար 1): Այսպես, առաջին խմբում ներառվել են Հայաստանը և Ալբանիան՝ ելնելով դրանց մակրոտնտեսական իրավիճակի համեմատաբար նմանությունից: Երկրորդ խմբում ներառվել են Բոսնիան և Հերցեգովինան ու Մակեդոնիան, որոնք առաջին և երկրորդ խմբի երկրների շարքում իրենց մակրոտնտեսական իրավիճակով գրավում են միջանկյալ դիրք: Եվ վերջապես երրորդ խմբում ներառվել են Բուլղարիան և Ռումինիան, որոնք 2007թ. հունվարի 1-ին անդամակցեցին ԵՄ:

<sup>3</sup> Համաձայն Եվրոպական հանձնաժողովի թեկնածու երկրներն են՝ Խորվաթիան, Թուրքիան և Մակեդոնիան, իսկ պոտենցիալ թեկնածու երկրներն են՝ Ալբանիան, Բոսնիան և Հերցեգովինան, Մոնտենեգրոն և Սերբիան (ներառյալ Կոսովոն՝ համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1244 որոշման):

**Գծանկար 1. Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի և Մարդկային զարգացման ինդեքսի համադրում**



*Աղբյուր. Արժույթի միջազգային հիմնադրամ, WEO 2007 և Մարդկային զարգացման ինդեքս, 2006*

Ինչպես նկատում ենք աղյուսակ 2-ից, մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով նշված երկրների շարքում առաջատար է համարվում Ռումինիան: 2006թ. Հայաստանի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը գրեթե համապատասխանում է 2004թ. Ալբանիայի, 1995թ. Մակեդոնիայի ու 1998թ. Բոսնիա և Հերցեգովինայի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշներին:

**Աղյուսակ 2. Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն 1995-2006թթ., PPP**

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Հայաստան	1,418	1,522	1,595	1,730	1,814	1,965	2,607	3,005	3,494	3,917	4,494	<b>4,863</b>
Ալբանիա	2,636	2,905	2,631	3,024	3,391	3,707	4,055	4,217	4,524	<b>4,901</b>	5,302	5,702
Մակեդոնիա	<b>4,939</b>	5,058	5,195	5,404	5,695	6,060	5,905	6,043	6,330	6,762	7,221	7,706
Բոսնիա և Հերցեգովինա	-	3,144	4,031	<b>4,929</b>	5,371	5,699	6,058	6,442	6,815	7,387	7,928	8,543
Բուլղարիա	5,494	5,193	5,023	5,319	5,558	6,026	6,466	6,948	7,494	8,188	8,948	9,798
Ռումինիա	5,717	6,089	5,847	5,655	5,698	5,974	6,496	6,974	7,521	8,417	9,056	9,869

*Աղբյուր. Արժույթի միջազգային հիմնադրամ, WEO 2007*

Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն տնտեսության զարգացման մակարդակը բնութագրող միակ տեղեկատվական և համեմատական ցուցանիշը չէ: Երկրի զարգացման գնահատման մյուս կարևոր ցուցանիշը դա Մարդկային զարգացման ինդեքսն է (Human Development Index, HDI), որը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի գնահատման չուցանիշից առաջ է անցնում դեպի բարեկեցության գնահատում:

Սակայն, այս ինդեքսը չի ապահովում մարդկային զարգացման համապարփակ գնահատում: Օրինակ, այն իր մեջ չի ներառում այնպիսի կարևոր ցուցանիշներ, ինչպիսիք են անհավասարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը և

քաղաքական ազատությունները: Իրականում Մարդկային զարգացման ինդեքսն արտացոլում է եկամտի և բարեկեցության բարդ փոխկապակցվածությունը:

**Աղյուսակ 3. Մարդկային զարգացման ինդեքսը և դրա մի քանի բաղադրատարրերը 2004թ.**

	Մարդկային զարգացման ինդեքս		1.Կյանքի միջին տևողություն		2.Չափահասների գրագիտության աստիճան		3.Միջնակարգ և բարձրագույն ուսումն. հաստ. ընդգրկվելու աստիճան		4.Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ, PPP	
	Դիրքը	Արժեքը	Դիրքը	Կարի	Դիրքը	%	Դիրքը	%	Դիրքը	ԱՄՆ դոլ
Հայաստան	80	0.768	77	71.6	12	99.4	79	74.0	109	4,101
Ալբանիա	73	0.784	53	73.9	16	98.7	109	68.0	97	4,978
Մակեդոնիա	66	0.796	52	73.9	34	96.1	101	69.7	82	6,610
Բոսնիա և Հերցեգովինա	62	0.800	49	74.3	31	96.7	111	67.3	78	7,032
Ռումինիա	60	0.805	78	71.5	26	97.3	74	75.3	63	8,480
Բուլղարիա	54	0.816	67	72.4	20	98.2	52	80.9	66	8,078

*Աղբյուր. Մարդկային զարգացման ինդեքս, 2006*

Ինչպես նկատում ենք Աղյուսակ 3-ից, Մարդկային զարգացման ինդեքսով նշված երկրների շարքում առաջատար է համարվում Բուլղարիան: Հայաստանը Մարդկային զարգացման ինդեքսի, ինչպես նաև մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով շատ ավելի մոտ է Ալբանիային: Սակայն, հարկ է նշել, որ Հայաստանում մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի աճի տեմպը 2006թ. 2000թ. նկատմամբ կազմել է 147.5%, մինչդեռ Ալբանիայում՝ 53.8%:

## **2. ՀՀ տնտեսության որոշ հատվածների համեմատական վերլուծություն**

Նախքան ՀՀ տնտեսության առանձին հատվածների վերլուծությանն անցնելը, ստորև ներկայացված է վերջին տարիների մակրոտնտեսական զարգացումների ամփոփ տեղեկատվությունը: Նշենք, որ անցումային շրջանը Հայաստանում կարելի է բաժանել երկու մասի. մինչև 90-երի կեսը՝ երբ կարևորագույն խնդիր էր մակրոտնտեսական կայունության ապահովումը, և 90-երի կեսերից մինչև 2006-2007թթ., երբ սկսեցին իրականացվել շուկայական տնտեսության կառուցվածքային բարեփոխումները: Ներկայումս սկսվում է այսպես կոչված «բարեփոխումների երկրորդ փուլը», որը միտված է ազատ շուկայական տնտեսության և ժողովրդավարության խրախուսմանը: Փուլային այս բաժանումն էլ, ըստ էության, իր արտացոլումն է գտել երկրի տնտեսական զարգացումը բնութագրող հիմնական ցուցանիշներում: Այսպես, եթե 1994-2000թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ տնտեսության ՀՆԱ-ի աճի միջին տեմպը կազմել է տարեկան 5%, ապա 2001-2006թթ. ընկած ժամանակաշրջանում այն

կազմել է 11% (Տե՛ս աղյուսակ 4): Համեմատության համար նշենք, որ օրինակ Բոսնիա և Հերցեգովինայի ՀՆԱ-ի աճի ցուցանիշը 2001-2006թթ. ընկած ժամանակաշրջանում կազմել է 5%: Հայաստանը ԱՊՀ շրջանակներում առաջին երկրներից մեկն էր, որտեղ ՀՆԱ-ի մինչանցումային մակարդակը վերականգնվեց 2003թ: Վերջին տարիներին ՀՀ տնտեսության մեջ ամենաարագ զարգացող ոլորտը շինարարությունն է:

**Աղյուսակ 4. ՀՀ տնտեսության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2000-2006թթ.**

	2000	2001	2002	2003	2004	2005	2006
ՀՆԱ (մլն. դոլար)	1911.6	2118.5	2376.3	2807.1	3576.6	4900.4	6386.7
ՀՆԱ-ի աճ (%)	5.9	9.6	13.2	14.0	10.5	13.9	13.3
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ	593.5	659.1	739.9	874.1	1112.9	1523.8	1983
Սպառում/ՀՆԱ (%)	108.9	104.8	99.1	93.5	92.6	86.0	83.1
Մասն. սպառում/ՀՆԱ (%)	97.1	93.6	89.1	83.3	82.5	75.5	71.8
Պետ. սպառում/ՀՆԱ (%)	11.8	11.3	10.0	10.2	10.2	10.6	11.3
Ներդր./ՀՆԱ (%)	18.6	19.8	21.7	24.3	24.9	30.5	33.6
Զուտ արտ./ՀՆԱ (%)	-27.2	-20.7	-17.2	-17.9	-14.7	-13.2	-14.4
Օտար. ուղղակի ներդ.	104.2	69.9	110.7	120.5	216.5	251.5	340.4
Առևտրային հաշվեկշիռ	-584.2	-535.6	-482.0	-593.9	-627.8	-827.8	-1190.4

*Աղբյուր. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն*

Հայաստանում եկամուտները և ներդրումները դեռևս շարունակում են հիմնվել օտարերկրյա խնայողությունների վրա, մինչդեռ տեղական խնայողությունների մակարդակը, որն ունի աճի միտում դեռևս բավական ցածր է: Այսպես, եթե 2004թ. տեղական խնայողությունների մակարդակը կազմում էր ՀՆԱ-ի 10.1%, ապա 2005թ. այն կազմում էր ՀՆԱ-ի 16.7%: Մյուս կողմից, եթե 1999թ. ընդհանուր ներդրումների 90% ֆինանսավորվում էր օտարերկրյա խնայողություններով, ապա 2004թ. այս ցուցանիշը կազմում էր 30%: 1996-2000թթ. ընկած ժամանակաշրջանում ընդհանուր ներդրումների միջին մակարդակը կազմել է ՀՆԱ-ի 19%, իսկ 2001-2006թթ. ընկած ժամանակաշրջանում՝ 24.7%: Ընդհանուր ներդրումներում օտարերկրյա խնայողությունների բաժնի նվազումը չի բերել ներդրումների ծավալի նվազման, քանի որ ընդհանուր ներդրումներում աճել է տեղական խնայողությունների բաժինը:

2005թ. տվյալներով գյուղատնտեսությունն ապահովում էր ՀՆԱ-ի 20.5%, արդյունաբերությունը՝ 44.3%, իսկ ծառայությունների ոլորտը՝ 35.2%: Այստեղ, հարկ է նշել, որ արդեն 2005թ. ՀՀ տնտեսության կառուցվածքը գրեթե համապատասխանում էր մինչանցումային ժամանակաշրջանի կառուցվածքին: 1998թ.-ից սկսած ՀՀ

տնտեսության մեջ գնաճի մակարդակը երկնիշ թվից վերածվեց միանիշ թվի և արդեն 2006թ. ՀՀ տնտեսության մեջ գնաճի մակարդակը կազմել է 5.2%: ՀՀ տնտեսության համար մեծ նշանակություն ունի նաև արտասահմանից ստացվող փոխանցումները: Այսպես, 2005թ. արտասահմանից ստացվող փոխանցումները 2000թ. հետ համեմատ աճել է ավելի քան երկու անգամ՝ կազմելով 456.1 մլն. դոլար: Միևնույն ժամանակ տրասնֆերտների ներհոսքի կտրուկ աճը և գնաճը զսպող քաղականությունը հանգեցրել են վերջին երեք տարիների ընթացքում դրամի շարունակական արժեվորմանը: Այսպես, 2005թ. հունվարի մեկից մինչև 2007թ. հոկտեմբերի մեկը ՀՀ դրամի նկատմամբ դոլարը արժեզրկվել է 31, իսկ եվրոն՝ 28%-ով: Այս երևույթը ճնշումներ է առաջացրել արտահանող հատվածի համար և հանգեցրել արտահանման աճի տեմպերի կրճատմանը:

## **2.1 Սեփականաշնորհման գործընթաց**

Ցանկացած անցումային տնտեսության համար սեփականաշնորհման գործընթացն ամենակարևոր ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումների տարրերից է: Անցումային տնտեսության համար սեփականաշնորհման գործընթացը հետազայում, ըստ էության, հիմք է հանդիսանում գործող շուկայական տնտեսություն հիմնելու համար: Այստեղ մենք առանձնահատուկ ուշադրություն ենք դարձնում ՀՀ սեփականաշնորհման գործընթացի վրա, քանի որ այն շատ կարևոր է Կոպենհագենի չափանիշների բավարարման տեսանկյունից: Այսպես, 1991թ. անկախությունից հետո Հայաստանում անմիջապես իրականացվեց հողի սեփականաշնորհման գործընթաց: Այսպես, 1991թ. սեփականաշնորհվեց գյուղատնտեսական հողակտորների 90%: Արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման առաջին ծրագիրը ընդունվեց 1994թ. հունվարին, իսկ 1994թ. հոկտեմբերին հաստատվեց դրա իրագործման վաուչերային համակարգը: Արդյուքնում, լայնամասշտաբ սեփականաշնորհման գործընթացը սկսվեց 1995թ. ապրիլին և շարունակվեց մինչև 1998թ., երբ ավարտվեց վաուչերային սեփականաշնորհումը: Այնուհետև, 1999թ. սեփականաշնորհման գործընթացում նկատվեց դանդաղեցում, քանի որ անցում կատարվեց վկայագրային սեփականաշնորհումից դեպի դրամական սեփականաշնորհում: Մակայն, ակնկալվում էր, որ վաուչերային սեփականաշնորհումն ավարտած շատ երկրներին բնորոշ նման դանդաղեցումը շուտով կհաղթահարվի: Արդեն 2003թ. սեփականաշնորհման գործընթացը կարելի էր հիմնականում ավարտված համարել: Այսպես, 2004թ. հուլիսի դրությամբ 7,226 փոքր (կամ դրանց

97%) և 1,894 միջին ու խոշոր (կամ դրանց 82%) պետական ձեռնարկություններ սեփականաշնորհվել էին<sup>4</sup>:

**Աղյուսակ 5. Խոշոր սեփականաշնորհված ընկերությունները 1995-2006թթ.**

Չեռնարկության անվանումը	Ոլորտը	Գործարքի արժեքը (մլն. դոլար)	Տարի
Գլին հյուրանոց	Ծառայություններ	4	2004
Զանգեզուրի պղնձամոլիբդենային գործարան	Արդյունահանող	132	2004
Սևան-Հրազդան կասկադ	Ենթակառուցվածք	25	2003
Հայկական էլեկտրաէներգիայի ցանց	Ենթակառուցվածք	37	2002
Հայաստանի էլեկտրական ցանց	Ենթակառուցվածք	12	2002
Արարատի ոսկու ձեռնարկություն	Արդյունահանող	3	2002
Նաիրիտ 1	Վերամշակում և ծառայություններ	15	2002
Պրոմեթեյ Զիմպրոմ	Այլ	2	1999
Երևանի կոնյակի գործարան	Վերամշակում և ծառայություններ	30	1998
Արմենտել	Վերամշակում և ծառայություններ	143	1997

*Աղբյուր. Համաշխարհային բանկ, սեփականաշնորհման բազա*

Ինչպես նկատում ենք աղյուսակ 5-ից, Արմենտելից հետո երկրորդ խոշոր սեփականաշնորհված ընկերությունը (100 մլն. դոլար և ավելի) դա Զանգեզուրի պղնձամոլիբդենային գործարանն է, որը սեփականաշնորհվեց 2004թ.: Ընդհանուր առմամբ ներկայումս Ֆրանսիայի, Իտալիայի, Հունաստանի, Հնդկաստանի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Սիրիայի քաղաքացիները և այդ երկրներում գրանցված իրավաբանական անձիք ավելի քան 60 ձեռնարկություններում, որոնք սեփականաշնորհվել են հրապարակային սակարկություններով, ձեռք են բերել մասնաբաժին: Օտարերկրյա ներդրումները հիմնականում կատարվել են էլեկտրաէներգիայի արտադրությունում (փոքր հիդրոէլեկտրակայաններ), հյուրանոցային համալիրներում (Արմենիա, Անի, Երևան), սննդի արդյունաբերությունում (Աբովյանի գարեջրի գործարան, Երևանի Կոնյակի գործարան), հեռահաղորդակցման ոլորտում (Արմենտել) և թեթև արդյունաբերությունում:

Համեմատության համար նշենք, որ օրինակ Բոսնիա և Հերցեգովինայում սեփականաշնորհման գործընթացն ընթացել է երեք փուլով՝ վաուչերային սեփականաշնորհում, հրապարակային սակարկությունների միջոցով

<sup>4</sup> Համաշխարհային բանկ, սեփականաշնորհման բազա


սեփականաշնորհում և ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների սեփականաշնորհում: Ինչպես նկատում ենք, Հայաստանի և Բոսնիայի ու Հերցեգովինայի սեփականաշնորհման գործընթացի փուլերը շատ նման են, սակայն Հայաստանում ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների առանձին սեփականաշնորհման գործընթաց որպես այդպիսին տեղի չի ունեցել:

Մակերոնիայում սեփականաշնորհման գործընթացը ընթացել է հետևյալ կերպ՝

- սոցիալական կապիտալի 30% (սովորական բաժնետոմսերի տեսքով) տրվել է աշխատողներին (վաուչերային մոդելի փոխարինում),
- սոցիալական կապիտալի 15% (սովորական բաժնետոմսերի տեսքով) ինքնաբերաբար փոխանցվել է պետական կենսաթոշակային հիմնադրամ,
- ձեռնարկության գնահատված արժեքի 55% տեղական և օտարերկրյա ներդրողների համար հավասար պայմաններով հանվել է վաճառքի:

Բուլղարիայում սկզբնական շրջանում իրականացվել է դրամային սեփականաշնորհում: Պետական ակտիվների 20%-ը հաստատված գնի 50%-ի չափով վաճառվել է աշխատողներին: Դրամային սեփականաշնորհման հետ մեկտեղ գուգահեռ իրականացվել է նաև ներքին սեփականաշնորհում, որի դեպքում տեղի է ունեցել մասնաբաժինների փոխանցում աշխատողներին և կառավարիչներին: 1996թ. սկսվեց իրականացվել լայնամասշտաբ սեփականաշնորհում: Այստեղ մասնաբաժինների հիմնական աղբյուր են հանդիսացել վաուչերները: Ակտիվների 10% անվճար տրամադրվել է աշխատողներին:

**Գծանկար 2 . Մասնավոր սեփականության բաժինը 2005թ. (%)**



*Աղբյուր. Small and Medium Entrepreneurship Sphere in Armenia 2004-2005<sup>5</sup>*


Արդեն 2005թ. տվյալներով Հայաստանում մասնավոր սեփականության բաժինը կազմում էր 84% (Տե՛ս գծանկար 2): Համեմատության համար նշենք, որ օրինակ

<sup>5</sup>Գծանկար 2 և 3-ում Մակեդոնիայի վերաբերյալ տվյալները բերված են համաձայն Մակեդոնիայի Չեռնարկատիրական գործունեության խթանման գործակալության տվյալների:

Հունգարիայում, Բուլղարիայում և Ռումինիայում նույն ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 80, 75 և 65%: Դիտարկվող երկրների շարքում միայն Մակեդոնիան է առանձնանում մասնավոր սեփականության համեմատաբար մեծ բաժնով:

Այստեղ հարկ է նշել, որ Հայաստանում սեփականաշնորհման գործընթացի հետ մեկտեղ զուգահեռ ստեղծվել են նոր փոքր և միջին ձեռնարկություններ: Այսպես, 2006թ. տվյալներով փոքր և միջին ձեռնարկություններին բաժին էր ընկնում ՀՆԱ-ի 40.3%, իսկ ոլորտում ներգրավված էր տնտեսապես ակտիվ բնակչության՝ 34.0%: Համեմատության համար նշենք, որ 2002թ. Հայաստանում փոքր և միջին ձեռնարկություններին բաժին էր ընկնում ՀՆԱ-ի 34.4%:

**Գծանկար 3. Փոքր և միջին ձեռնարկությունների որոշ ցուցանիշներ 2005թ.**



*Աղբյուր. Small and Medium Entrepreneurship Sphere in Armenia 2004-2005*

Ինչպես նկատում ենք գծանկար 3-ից, 2005թ. տվյալներով ՀՆԱ-ում փոքր և միջին ձեռնարկությունների բաժնի ցուցանիշով Հայաստանին զիջում են միայն Բուլղարիան (30.0%) և Հունգարիան (36.9%): Մակայն, նշված երկրները փոքր և միջին ձեռնարկություններում ներգրավված աշխատուժի բաժնի իրենց ցուցանիշներով գերազանցում են Հայաստանի ցուցանիշին: Նշված երկրներից ՀՆԱ-ում փոքր և միջին ձեռնարկությունների բաժնի ցուցանիշով, բացի Մակեդոնիայից, Հայաստանին գերազանցում է միայն Ռումինիան: Մակայն, Ռումինիայում փոքր և միջին ձեռնարկություններին բաժին է ընկնում ավելի քիչ աշխատուժ (ընդհանուր աշխատուժի 21%), քան Հայաստանում: Հարկ է նշել, որ նշված երկրների շարքում փոքր և միջին ձեռնարկություններում ներգրավված աշխատուժի և ՀՆԱ-ում համեմատաբար մեծ բաժնով առանձնանում է Մակեդոնիան:




Ընդհանուր առմամբ սեփականաշնորհման մեղելի ընտրությունը կախված է տնտեսության առանձնահատկություններից: Սակայն, իրականում երկրները հաճախ սեփականաշնորհման գործընթացի իրականացման ձևերը նմանակում են մեկը մյուսից և այստեղ ամբողջ հարցը կայանում է ոչ թե դրանց տարբերության և նմանության, այլ՝ արդյունավետության մեջ: Այս առումով կարելի է նշել, որ սեփականաշնորհման գործընթացն անցումային երկրներում հետապնդել է մի շարք նպատակներ, սակայն դրանցից գլխավորը հանդիսացել է մասնավոր սեփականության վրա հիմնված տնտեսության ստեղծումը: Եվ այս խնդիրը հաջողությամբ լուծել են գրեթե բոլոր անցումային երկրները՝ այդ թվում նաև Հայաստանը: Մեկ այլ հարց է, որ սեփականաշնորհումը կարող էր ապահովել ավելին քան զուտ մասնավոր սեփականության հաստատումը, մասնավորապես՝ ձեռնարկչատիրության և նորարարության խթանում, կորպորատիվ կառավարման զարգացում և այլն: Ելնելով սկզբնական պայմանների տարբերությունից, պատմական և քաղաքական առանձնահատկություններից՝ որոշ անցումային երկրներ նշված ոլորտներում բավականին արագ արձանագրեցին առաջընթաց, իսկ մյուսները մինչ այժմ դեռևս չեն կարողանում լուծել բազմաթիվ հիմնասյունային խնդիրներ: Սակայն, ամեն դեպքում սեփականաշնորհման գործընթացը կատարել է իր գլխավոր առաքելությունը:

## **2.2 Աշխատուժի շուկա և «գիտելիքի վրա հիմնված» տնտեսություն**

Աշխատուժի շուկան որպես այդպիսին անցումային երկրներում ձևավորվեց հենց այդ անցման փուլում: Այն բնութագրվում է բազմաթիվ առանձնահատկություններով, որոնց սույն աշխատանքի շրջանակում մենք չենք կարող անդրադառնալ: Սակայն մեր հետազոտության շրջանակներում այն կարևորվում է երկու առումով. նախ՝ զբաղվածության հիմնախնդիրը մակրոտնտեսական կայունության ապահովման կարևորագույն տարրերից է, և երկրորդը՝ աշխատուժի շուկան իր որակական և կառուցվածքային առումներով չափազանց կարևոր է մրցունակ տնտեսություն՝ մրցունակ մասնավոր հատված, ունենալու տեսանկյունից: Այսինքն Կոպենհագենի չափանիշներից՝ կայուն մակրոտնտեսական իրավիճակ և մրցակցությանը դիմակայելու տեսանկյունից, շատ կարևոր է անդադառնալ նաև աշխատուժի շուկային: Այստեղ մենք անդրադառնում ենք նաև «գիտելիքի վրա հիմնված» տնտեսություն ստեղծելու հիմնախնդիրներին, քանի որ դա ի վերջո պետք է դրականորեն անդրադառնա զբաղվածության կառուցվածքի վրա:

Նախքան կառուցվածքային և որակական բնութագրիչներին անցնելը հարկ է նշել, որ վերջին տասնամյակում Հայաստանի տնտեսական աճը գրեթե չի ուղեկցվում զբաղվածության աճով: Ավելին, վերջին 10 տարվա ընթացքում Հայաստանում զբաղվածությունը կրճատվել է 32.0%՝ 2005թ. կազմելով 1,097 հազ. մարդ: Ամեն դեպքում միտում կա, որ աշխատուժի շուկայում իրավիճակը կբարելավվի: Այսպես, գրանցված գործազուրկների թիվը, որոնք փնտրում են աշխատանք, 2003-2005թթ. 147 հազ.-ից կրճատվել է մինչև 88.9 հազ.: Վերջին տարիներին Հայաստանում աշխատատեղերը հիմնականում ստեղծվել են մասնավոր նոր ձևավորվող ձեռնարկություններում: 1999-2004թթ. ընկած ժամանակահատվածում արդյունաբերությունում ստեղծված 26.5 հազ. աշխատատեղերից 83.4% բաժին էր ընկնում նոր ստեղծված ձեռնարկություններին<sup>6</sup>:

**Գծանկար 4. ՀՀ տնտեսության կառուցվածքը 1995-2005թթ.**




Աղբյուր. Armenia at a glance, World Bank, 2006

Ինչպես նկատում ենք գծանկար 4-ից, ՀՀ տնտեսության կառուցվածքն արդեն 2005թ. գրեթե համապատասխանում էր մինչանցումային ժամանակաշրջանի կառուցվածքին: Սակայն, ՀՀ տնտեսության մեջ զբաղվածության կառուցվածքը զգալի տարբերվում է մինչանցումային կառուցվածքից (Տե՛ս գծանկար 5): Այսպես, չնայած 1995-2005թթ. ընկած ժամանակաշրջանում գյուղատնտեսության բաժնի կրճատմանը (ավելի քան երկու անգամ)՝ այդ ոլորտում զգալի աճել է (22.9%) զբաղվածության մակարդակը, իսկ 1990թ, համեմատ՝ երկուսուկես անգամ: Այստեղից կարելի է փաստել, որ Հայաստանում գյուղատնտեսության ոլորտը ոչ արտադրողական է: Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության աճը հիմնականում տեղի է ունեցել արդյունաբերության ոլորտում զբաղվածության կրճատման հաշվին: Այստեղ հարկ է

<sup>6</sup> Armenia: Labor Market Dynamics, World Bank, 2007

նշել, որ արդյունաբերության ոլորտում զբաղվածության կրճատումն ուղղորդվել է արդյունաբերության բաժնի ավելացմամբ:

**Գծանկար 5. ՀՀ զբաղվածության կառուցվածքը 1990-2003թթ.**



*Աղբյուր. Armenia: Labor market dynamics, World Bank, 2007*


Այսպիսով 2005թ. տվյալներով տնտեսապես ակտիվ բնակչության գերակշիռ մասը (ավելի քան 40%) ներգրավված էր գյուղատնտեսության ոլորտում, որը ապահովում էր ՀՆԱ-ի 20.5%: Համեմատության համար նշենք, որ ԵՄ անդամակցած նոր երկրներում այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար միջինում 20.0 և 4,5%: Ավելին, 2005թ. տվյալներով Հայաստանում ծառայությունների ոլորտին բաժին էր ընկնում ՀՆԱ-ի 35.2%, իսկ ԵՄ անդամակցած նոր երկրներում այդ ցուցանիշը գերազանցում է 60.0%:

Երիտասարդների և ուսանողների շրջանում գործազրկությունը լուրջ խնդիր է Հայաստանի համար: Ավելին, այսօր երիտասարդների շրջանում գործազրկությունը գրեթե հիմնախնդիր է: Համաձայն ՄԱԿ-ի տվյալների, 2003թ. 16-24 տ. մարդիկ կազմում են աշխարհի աշխատունակ բնակչության 1/4-ը, որոնց բաժին է ընկնում համաշխարհային գործազրկության 47.0%: 2004թ. տվյալներով Հայաստանում երիտասարդների շրջանում գործազրկությունը կազմել է ավելի քան 43.0%: Ավելին Հայաստանում երիտասարդների զգալի մասը ոչ աշխատում է, ոչ էլ սովորում:

Ինչպես նկատում ենք գծանկար 6-ից, դիտարկվող երկրների շարքում երիտասարդների շրջանում գործազրկության անհամեմատ բարձր մակարդակով առանձնանում է Մակեդոնիան, իսկ օրինակ 2007թ. ԵՄ անդամակցած Ռումինիայում այդ ցուցանիշն ավելի քան երկու անգամ փոքր է Հայաստանի ցուցանիշից: Ընդհանուր առմամբ, դիտարկվող երկրների շարքում, բացի Մակեդոնիայից,

Հայաստանն առանձնանում է երիտասարդների շրջանում իր համեմատաբար բարձր գործազրկության մակարդակով:

**Գծանկար 6. Երիտասարդների (15-24) շրջանում գործազրկության մակարդակը 2004թ.**



*Աղբյուր. World Development Indicators, World Bank, 2005*

Զբաղվածության կառուցվածքը որոշակիորեն պայմանավորված է այս կամ այն երկրի մասնագիտացմամբ: Այսպես, Հայաստանի աշխարհագրական դիրքը և բնական ռեսուրսների սակավությունը թույլ են տալիս ենթադրել, որ հետագա տնտեսական աճը պետք է հիմնվի ոչ թե ավանդական տնտեսական գործունեության վրա, այլ «գիտելիքի վրա հիմնված» տնտեսության վրա: «Գիտելիքի վրա հիմնված» տնտեսության հիմնական առանձնահատկություններն են.

- գիտելիքը համարվում է որպես հիմնական կապիտալ, իսկ տնտեսական աճն ուղղորդվում է գիտելիքի կուտակմամբ,
- տեխնոլոգիաները կարող են ավելացնել ներդրման հատույցը,
- ներդրումները կարող են բարձրացնել տեխնոլոգիաների արժեքը և հակառակը: Գիտելիքի արդյունավետ ստեղծման, օգտագործման և փոխանակման համար առավել ընդունված պայմաններն են.

- տնտեսական և ինստիտուցիոնալ ռեժիմը, որոնք ստեղծում են նախապայմաններ գիտելիքի ստեղծման, բաշխման և արդեն առկա գիտելիքների օգտագործման համար,
- կրթված և ընդունակություններ ունեցող բնակչությունը, որը կարող է ստեղծել և օգտագործել գիտելիքը,
- հետազոտական կենտրոնները, համալսարանները, խորհրդատվական ընկերությունները և այլ կազմակերպությունները, որոնք կարող են հավաքագրել և վերլուծել այդ ոլորտի համաշխարհային զարգացումները, այնուհետև հարմարացնել ու կիրառել դրանք ազգային մակարդակում,


- դինամիկ տեղեկատվական ենթակառուցվածքը, որը կարող է օժանդակել արդյունավետ հաղորդակցությանը և տեղեկատվության տարածմանը ու մշակմանը:

Հայաստանի գիտական ներուժն ամփոփված է Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայում, որը տասնամյակներ շարունակ գիտության և տեխնոլոգիաների զարգացման գործում հանդիսացել է առաջնորդ: Մակայն, ներկայումս դրա լաբորատորիաներից մեծ մասը գտնվում են վատ պայմաններում, գիտնականների մեծ մասը ծեր են կամ չեն կարողանում հարմարվել շուկայական տնտեսության պայմաններին: Ազգային ակադեմիայի հետազոտությունների հիմնական մասն իրականացվում է միջազգային աղբյուրների օժանդակությամբ:

Հայաստանում հետազոտությունները ֆինանսավորելու համար կա երեք հիմնական աղբյուր՝ պետական, միջազգային և մասնավոր: Պետական միջոցների մեծ մասը բաժին է ընկնում Ազգային ակադեմիային: Միջազգային աղբյուրներն օժանդակում են Ազգային ակադեմիայի հետազոտություններին, պետական ինստիտուտներին և համալսարաններին:

Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին պետության կողմից գիտությանը հատկացվող ֆինանսավորումն անընդհատ աճում է, մեր կարծիքով այն դեռևս շատ աննշան է: Այսպես, եթե 2003թ. պետության կողմից գիտությանը հատկացվող միջոցները կազմել են մոտ 3,2 մլն. դոլար, 2004թ.՝ 3.9 մլն. դոլար, ապա 2005թ. պետության կողմից գիտությանը հատկացվող միջոցները աճել են 43%-ով՝ կազմելով 5.6 մլն. դոլար, որը կազմում էր բյուջեյի ընդհանուր ծախսերի 1%: Ընդհանուր առմամբ, 2005թ. տվյալներով Հայաստանում գիտական հետազոտություններին ուղղված ընդհանուր ծախսերը կազմել են 10.5 մլն. դոլար (ՀՆԱ-ի 0.2%): Ինչպես նկատում ենք, գիտության զարգացման ընդհանուր ծախսերի ավելի քան 45% բաժին է ընկել միջազգային աղբյուրներին (քանի որ մասնավոր աղբյուրներից ստացվող ֆինանսավորումը շատ աննշան է): Այստեղ համեմատության համար նշենք, որ 2005թ. Ռուսիայում նույն ծախսերը կազմել են 394.2 մլն. դոլար (ՀՆԱ-ի 0.4%), իսկ Բուլղարիայում 133.2 մլն. դոլար (ՀՆԱ-ի 0.5%): Մյուս կողմից, ինչպես նկատում ենք գծանկար 7-ից, մեր կողմից դիտարկվող երկրների շարքում կրթության վրա կատարվող պետական ծախսերի հարաբերական բարձր մակարդակով առնաձևանում է Բուլղարիան, իսկ ընդհանուր առմամբ նշված երկրների ցուցանիշների միջև տարբերությունը մեծ չէ :

**Գծանկար 7. Կրթության վրա կատարված պետական ծախսերի բաժինը ՀՆԱ-ում<sup>7</sup>**



Աղբյուր. World Development Indicators, World Bank, 2005

Մեր կողմից դիտարկվող երկրների համար «Գիտելիքի վրա հիմնված» տնտեսության ինդեքսները վերլուծելու համար երկրները կարելի է պայմանականորեն բաժանել չորս խմբի<sup>8</sup>.

- հետամնաց երկրներ ( $0 < KEI \leq 3.7$ )
- փոխանակող երկրներ ( $3.7 < KEI \leq 6$ )
- «անդամակցող երկրներ», որոնց մրցակցության հիմքում ընկած է գիտելիքը և նորարարությունը, այլ ոչ թե աշխատուժի գինը ( $6 < KEI \leq 8$ ),
- Մեծ յոթնյակի մակարդակ ( $8 < KEI \leq 10$ )

Ինչպես նկատում ենք գծանկար 8-ից, համաձայն վերը նշված խմբավորման, Հայաստանը, ինչպես նաև Մակեդոնիան և Ռումինան համարվում են գիտության ոլորտում փոխանակման գործընթացին ակտիվորեն մասնակցող երկրներ: Մեր կողմից դիտարկվող երկրների շարքում «գիտելիքի վրա հիմնված» տնտեսության իր հարեարականորեն փոքր ինդեքսով առանձնանում է Արևանիան՝ դասվելով «հետամնաց» երկրների խմբում, իսկ հարաբերականորեն մեծ ինդեքսով՝ Բուլղարիան:

Ներկայիս պայմաններում Հայաստանը «գիտելիքի վրա հիմնված» տնտեսության կառուցման ճանապարհին ունի հետևյալ հիմնախնդիրները.


- բարձր կրթական մակարդակ և մոտիվացիա ունեցող անհատների արտահոսք,
- կրթության և գիտահետազոտական աշխատանքների հատկացվող պետական ֆինանսավորման անբավարար մակարդակ,

<sup>7</sup> Յուրաքանչյուր երկրի համար կրթության վրա կատարված պետական ծախսերի մեծությունը բերված է 1996-2005թթ. ցուցանիշների միջինով:

<sup>8</sup> “Armenia The Caucasian Tiger”, World Bank, 2006

- տեղական ձեռնարկչատիրական գործունեության թույլ մակարդակ (մասնավոր հատվածը գրեթե չի ֆինանսավորում գիտահետազոտական աշխատանքները):

Գծանկար 8. «Գիտելիքի վրա հիմնված» տնտեսության ինդեքս<sup>9</sup>



Աղբյուր. Knowledge Economy Index 2007, World bank

### 2.3 Ֆինանսական հատված

Կայուն և երկարաժամկետ տնտեսական զարգացումը պահանջում է լավ զարգացած ֆինանսական հատված: Անցումային փուլում գտնվող տնտեսություններում սկզբնական շրջանում իրական հատվածի աճը հիմնականում ֆինանսավորվում է ոչ ֆորմալ ֆինանսական հատվածից: Սակայն, երբ իրական հատվածը հասնում է զարգացման մի որոշակի կետի, ոչ ֆորմալ ֆինանսավորման մեթոդն այլևս չի կարող խթանել հետագա տնտեսական զարգացմանը: Այսինքն, որոշակի պահից սկսած առանց զարգացած ֆինանսական շուկայի հետագա երկարաժամկետ տնտեսական աճը գրեթե հնարավոր չէ: Իրականում ֆորմալ ֆինանսավորման երկու հիմնական աղբյուր գոյություն ունի.

1. Առաջինը դա բանկային համակարգն է, որը սովորաբար տրամադրում է կարճաժամկետ կամ միջնաժամկետ ֆինանսական միջոցներ՝ հետևաբար ապահովելով ավելի շատ ընթացիկ ֆինանսավորում: Սակայն հարկ է նշել, որ բանկային համակարգի վրա հիմնված ֆինանսական համակարգերում բանկերը նաև հանդիսանում են երկարաժամկետ ֆինանսավորման աղբյուր:

<sup>9</sup> «Գիտելիքի վրա հիմնված» տնտեսության (Knowledge Economy Index, KEI) ինդեքսը ընկած է՝ 0 ≤ EI ≤ 10 միջակայքում: 45<sup>0</sup> անկյանը տարված ուղիղ գծից վրա տեղաբաշխված երկրները պահպանել են իրենց հարաբերական դիրքը 1995թ. հետ համեմատ, գծից ներքև տեղաբաշխված երկրները վատթարացրել են իրենց հարաբերական դիրքը 1995թ. հետ համեմատ և վերջապես գծից վեր տեղաբաշխված երկրները բարելավել են իրենց հարաբերական դիրքը 1995թ. հետ համեմատ:


2. Կապիտալի շուկաների միջոցով իրականացվող ֆինանսավորում՝ որն էլ հանդիսանում է «երկար փողերի» մատակարար:

Հարկ է նշել, որ զարգացող երկրներում առավել ևս փոքր երկրներում, ֆինանսական համակարգը սովորաբար հիմնված է լինում բանկային հատվածի վրա, որն էլ հանդիսանում է տնտեսության ֆինանսավորման հիմնական աղբյուրը:

ՀՀ տնտեսության զարգացման առանձնահատկություններից մեկը ֆինանսական հատվածի փոքր չափերն են: Միաժամանակ ֆինանսական համակարգը միակողմանի է՝ զարգացած է միայն բանկային համակարգը: Հայաստանի բանկային համակարգը, ի տարբերություն դիտարկվող երկրների, ամբողջովին մասնավոր է և դրան բաժին է ընկնում ֆինանսական հատվածի ակտիվների ավելի քան 95%: Մյուս կողմից բանկային համակարգի ընդհանուր ակտիվների բաժինը ՀՆԱ-ում 2006թ. կազմել է մոտ 19.7%, որը Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում ամենացածր ցուցանիշներից մեկն է: Համեմատության համար նշենք, որ օրինակ Ալբանիայի բանկային համակարգին բաժին է ընկնում ֆինանսական հատվածի ակտիվների ավելի քան 90%, իսկ բանկային համակարգի ընդհանուր ակտիվների բաժինը ՀՆԱ-ում կազմել է 52%<sup>10</sup>:

Ինչպես նկատում ենք գծանկար 9-ից, Հայաստանի բանկային համակարգի կենտրոնացման ցուցանիշը համեմատաբար ցածր է մյուս երկրների կենտրոնացման ցուցանիշից (բացի Բուլղարիայից):

**Գծանկար 9. Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների բաժինը ՀՆԱ-ում և խոշոր հինգ բանկերի ակտիվների բաժինը ընդհանուր ակտիվներում 2005թ.:**



Աղբյուր. *Banking in South-Eastern Europe On the move, Bank Austria Creditanstalt AG*

Այսպես, Հայաստանի բանկային համակարգում հինգ ամենախոշոր բանկերին բաժին էր ընկնում ամբողջ բանկային համակարգի ընդհանուր ակտիվների ավելի քան


<sup>10</sup> Albania: Financial System Stability Assessment, International Monetary Fund, 2005



55% և ընդհանուր կապիտալի ավելի քան 60% (Տե՛ս գծանկար 9): Իհարկե խոշոր բանկերի առկայությունը բարձրացնում է բանկային համակարգի ընդհանուր կայունությունը և կարող է մեծացնել խոշոր վարկավորման հնարավորությունները: Միևնույն ժամանակ, միջին և փոքր բանկերը՝ կենտրոնացնելով իրենց գործունեությունը ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման գործում, նույնպես կարող են կարևոր դեր ունենալ տնտեսական զարգացման գործում:

ՀՀ բանկային համակարգի կայունությունն ապահովելու նպատակով 90-ական թթ. վերջից սկսած Կենտրոնական բանկը բարձրացնում էր առևտրային բանկերի սեփական կապիտալի նկատմամբ պահանջը, որը արդեն 2005 թ. հուլիսի մեկի դրությամբ կազմում էր 5 մլն., իսկ նոր հիմնադրվող բանկերինը՝ 10 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

**Գծանկար 10. Տեղական և օտարերկրյա բանկերի քանակը**




*Աղբյուր. Կառուցվածքային և ինստիտուցիոնալ փոփոխությունների ցուցանիշներ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ*

Այդ քաղաքականությամբ նախատեսվում էր «առողջացնել բանկային համակարգը»՝ ազատվելով փոքր, ոչ բավարար քանակությամբ ռեսուրսներ ունեցող «գրպանի» բանկերից: Սակայն բանկերի մեծամասնությունը կարողացավ միջոցներ հայթաթել կապիտալը համալրելու համար, իսկ որոշ բանկերի՝ շուկայից դուրս մղվելու պատճառներն ավելի շատ կապված էին այլ հանգամանքների՝ կառավարման և ռիսկերի վերահսկման անկատար համակարգերի հետ: Որպես արդյունք, 2006թ. դեկտեմբերին Հայաստանում գործում էր 21 բանկ, որից 10-ն օտարերկրյա են (Տե՛ս գծանկար 10):

Հայաստանի բանկային համակարգի գործունեությունը և օտարերկրյա բանկերի դերը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել օտարերկրյա բանկերի ակտիվների բաժինը ընդհանուր ակտիվներում ու մասնավոր հատվածի վարկավորման աստիճանը

(Տե՛ս գծանկար 11): Ինչպես նկատում ենք գծանկար 11-ից, Հայաստանում օտարերկրյա բանկերի ակտիվների բաժինը ընդհանուր ակտիվներում կազմել է 48.7%: Դիտարկվող երկրների շարքում օտարերկրյա բանկերի ակտիվների համեմատաբար փոքր բաժնով առանձնանում է նաև Մակեդոնիան (51.3%): Հայաստանում, ի տարբերություն նշված մյուս երկրների, բավական փոքր է մասնավոր հատվածի վարկավորման աստիճանը: Մասնավոր հատվածի վարկավորման համեմատաբար փոքր ցուցանիշներ ունեն նաև Ալբանիան (10.3%) և Ռումինիան (10.2%): Սակայն, ի տարբերություն Հայաստանի և Ալբանիայի, Ռումինիայում բավական մեծ են արժեթղթերի շուկայի կապիտալիզացիայի և արժեթղթերի շրջանառության ցուցանիշները (Տե՛ս գծանկար 12):

**Գծանկար 11. Բանկային համակարգի որոշ ցուցանիշներ**



*Աղբյուր. Կառուցվածքային և ինստիտուցիոնալ փոփոխությունների ցուցանիշներ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ*

Վերջին տարիների երկնիշ տնտեսական աճը հուշում է, որ այդ գործընթացում կարևոր դեր պետք է ունենա ֆինանսական հատվածի մասնակցությունը: Սակայն, ինչպես երևում է գծանկար 11-ից, Հայաստանում բանկային համակարգի կողմից մասնավոր հատվածի ֆինանսավորումը շարունակում է մնալ չափազանց ցածր մակարդակի վրա: Այստեղ հարկ է նշել, որ տնտեսական զարգացման գործընթացում ֆինանսական հատվածի մասնակցության փոքր աստիճանը պայմանավորված է ոչ միայն այդ ոլորտում առկա ինստիտուցիոնալ հիմնախնդիրներով: Օրինակի համար, ինչպես մենք համոզվեցինք, բանկային ոլորտի ինստիտուցիոնալ զարգացումը, բավարար գործոն չհանդիսացավ ֆինանսական և իրական հատվածների միջև փոխկապվածությունը բարձրացնելու համար: Սովետային տնտեսության մեծ չափերի


պատճառով իրական տնտեսության զգալի բաժնի համար ֆինանսական հատվածը ոչ հասանելի է: Նույնիսկ, եթե բանկերը պատրաստ են իրենց վրա վերցնել ոչ թափանցիկ կառույցների ֆինանսավորումը, ապա բարձր ռիսկայնության առկայության պատճառով դա բերում է ֆինանսական ռեսուրսների գնի բարձրացման, որը ձեռնտու չէ այդպիսի ձեռնարկություններին: Սրան ավելացնելով նաև տնտեսության մեջ առկա խոշոր մենաշնորհային խմբավորումները, որոնք նույնպես իրականում «փակ» են և իրենց պրոյեկտները ֆինանսավորում են սեփական ռեսուրսներով և փոխառու միջոցների կարիք չունեն, ստանում ենք մեր այսօրվա բանկային համակարգի պատկերը:

Որպեսզի ավելի ճիշտ ուրվագծվի ֆինանսական համակարգի վիճակը դիտարկվող երկրներում պետք է վերլուծել նաև ոչ-բանկային հատվածը: Կապիտալի շուկան թերզարգացած է դիտարկվող բոլոր ոչ ԵՄ անդամ երկրներում: Այս առումով ավելի ակնհայտ է դառնում ՀՀ բանկային համակարգի փոքր լինելու խնդիրը:

90-ական թթ. վերջին, նպատակ ունենալով Հայաստանում ստեղծել կապիտալի կատարյալ շուկա, ֆոնդային գործիքների, ինչպես նաև սովորույթների և նախապայմանների լրիվ բացակայության պայմաններում, Հայաստանում, ինչպես նաև այլ անցումային երկրների առջև, խնդիր դրվեց արժեթղթերի շուկայի ձևավորման համար ստեղծել ֆոնդային հարթակ և կարգավորող դաշտ: Հայաստանն օգտվելով USAID –ի ընձեռած հնարավորությունից՝ ինչպես նաև ներգրավված մարդկային ռեսուրսների (արտասահմանյան փորձագետներ) առկայության պայմաններում, 1998-99թթ. ակտիվորեն սկսեց ձեռնարկել միջոցառումներ «Արժեթղթերի շուկայի կարգավորման» օրենքի մշակման և ընդունման համար: Ձևավորվեց Արժեթղթերի հանձնաժողովը՝ բավական անկախ ու ժամանակակից գործիքակազմով, Ֆոնդային բորսան ու Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիան՝ ինքնակարգավորվող իրավաբանական կարգավիճակով: Նաև մշակվել է կարգավորման դաշտ ֆոնդային բորսայի /բորքերային և դիլերային կազմակերպությունների/ պրոֆեսիոնալ մասնակիցների գործունեության համար, սահմանվել են արժեթղթերի հաշվառման, էմիսիայի, լիստինգի և դելիստինգի կանոններն ու ընթացակարգերը, ֆինանսական տեղեկատվության բացահայտման մեխանիզմները և այլն: Ֆոնդային բորսայի գործունեության համար առաջարկվել են նորագույն տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ: Սակայն, անցումային երկրներին բնորոշ և սեփականաշնորհման գործընթացում տեղ գտած օբյեկտիվ և սուբյեկտիվ թերություննրով պայմանավորված, ինչպես նաև նախկինում կորպորատիվ կառավարման փորձի ի սպառ բացակայության հետևանքով ֆինանսական համակարգի այս ոլորտում այդպես էլ ակտիվություն

չնկատվեց: Կապիտալի շուկայի զարգացում տեղի չունեցավ մաս ինստիտուցիոնալ ներդրողների բացակայության հետևանքով, որոնք, ինչպես ցույց է տալիս անցումային երկրների փորձը, հանդիսանում են այդ ոլորտի զարգացման լավագույն կատալիզատորը: Այսպես, եթե դիտարկելու լինենք Բուլղարիայի փորձը կապիտալի շուկայի զարգացման գործում, ապա պետք է նշել, որ դեռևս 2003թ. արժեթղթերի շուկան շարունակում էր մնալ փոքր, թերզարգացած, ցածր շրջանառության ցուցանիշներով և ոչ իրացվելի արժեթղթերի համեմատաբար բարձր տեսակարար կշռով: Չնայած բանկային փոխառությունների բարձր արժեքի, կապիտալի շուկան ֆինանսական միջոցների ստացման շատ սահմանափակ այլընտրանք էր<sup>11</sup>: Իրավիճակը սկսեց բարելավվել միայն ինստիտուցիոնալ ներդրողների զարգացման հետևանքով, ինչը նոր գործիքների պահանջարկ ստեղծեց /հիպոթեքային արժեթղթեր, մունիցիպալ պարտատոմսեր/:

**Գծանկար 12. Ֆինանսական հատվածի որոշ ցուցանիշներ**



*Աղբյուր. Կառուցվածքային և ինստիտուցիոնալ փոփոխությունների ցուցանիշներ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ*

Այսպիսով, մասնավոր կենսաթոշակային հիմնադրամների բացակայությունը և ապահովագրական շուկայի չափազանց պասիվ մակարդակը չեն ապահովում տնտեսության համար չափազանց կարևոր «երկար փողերի» առաջարկ: Բոլոր նշված գործոնները համալիր պայմանավորում են Հայաստանի ֆինանսական համակարգի «աստղ» լինելու փաստը: Ինչպես նկատում ենք գծանկար 12-ից, Հայաստանի կապիտալի շուկան արժեթղթերի շուկայի կապիտալիզացիայի և արժեթղթերի շրջանառության ցուցանիշներով զգալի զիջում է դիտարկվող մյուս երկրների կապիտալի շուկայի նմանատիպ ցուցանիշներին: Սակայն այստեղ հարկ է նշել, որ


<sup>11</sup> European Commission, Enlargement Papers “The financial Sector in Bulgaria”, September 2003

Ռումինիայի և Բուլղարիայի պարագայում դա անդամակցության լուրջ խոչընդոտ չհանդիսացավ:

## 2.4 Արտաքին առևտուր

ՀՀ արտաքին առևտուրը մանրամասն դիտարկելու նպատակով անհրաժեշտ է վերլուծել դրա տարածքային տեղաբաշխումը: Հայաստանի ամենագլխավոր հինգ առևտրային գործընկերներին բաժին է ընկնում ամբողջ արտաքին առևտրի մոտ 80%: Այսպես, ԵՄ հետ Հայաստանի արտաքին առևտրի ծավալները սկզբնական ժամանակաշրջանում զգալի զիջում էին ԱՊՀ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի ծավալներին: Սակայն, ի տարբերություն ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրի, ԵՄ հետ արտաքին առևտուրն ունեցել է գրեթե անընդհատ աճի միտում:

**Գծանկար 13. ԵՄ և ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալների դինամիկան 1993-2006թթ<sup>12</sup>. (մլն. դոլար)**




*Աղբյուր. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուր, ՀՀ վիճակագրության ծառայություն*

Այսպես, 1993-1998թթ. ընկած ժամանակահատվածում ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրում և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալները զգալի գերազանցել են ԵՄ երկրներ արտահանման և ԵՄ երկրներից ներմուծման ծավալներին (Տե՛ս գծանկար 13, գծանկար 14): 1998թ. ԵՄ և ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալները գրեթե հավասարվել են՝ կազմելով համապատասխանաբար 259,4 և 221,4 մլն. դոլար: Այնուհետև, մինչև 2001թ. զգալի կրճատվել է ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալները և հակառակ դրան աճել է ԵՄ երկրներից ներմուծման ծավալները: Սկսած 2002թ. մեծ տեմպերով միաժամանակ աճել է և՛ ԱՊՀ, և՛ ԵՄ երկրներից ներմուծման ծավալները:

<sup>12</sup> ԵՄ հետ ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշները 2004-2005թթ. բերված են ԵՄ 25 երկրների համար:

**Գծանկար 84. ԵՄ և ԱՊՀ երկրներ արտահանման ծավալների դինամիկան 1993-2006թթ. (մլն. դոլար)**



*Աղբյուր. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուր, ՀՀ վիճակագրության ծառայություն*

Նմանատիպ օրինաչափություն առկա է նաև ԱՊՀ և ԵՄ երկրներ արտահանման մեջ (Տե՛ս գծանկար 14): Այսպիսով, 1993-2002թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ և ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտուրը կրել է «պարուրածն բնույթ»: Այսինքն, երբ նվազել է ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրի ծավալներն աճել է ԵՄ երկրների հետ արտաքին առևտրի ծավալները, իսկ երբ նվազել է ԵՄ երկրների հետ արտաքին առևտրի ծավալներն աճել է ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրի ծավալները:

Ընդհանուր առմամբ, եթե 1993-1997թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրի ծավալների մեծ մասը բաժին էր ընկնում ԱՊՀ երկրներին, ապա արդեն 1998թ. մինչև օրս ՀՀ արտաքին առևտրի ամենագլխավոր գործընկերը ԵՄ-ն է: 2006թ. տվյալներով ՀՀ և ԵՄ միջև ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 1164.5 մլն. դոլար՝ այդ թվում արտահանումը կազմել է 473.4, իսկ ներմուծումը՝ 691.1 մլն. դոլար:

Այսպիսով, ինչպես նկատում ենք, ԵՄ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը գրեթե երկու անգամ գերազանցում է ԱՊՀ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառությանը: Ավելին, ՀՀ արտաքին առևտուրը ինչպես ԵՄ երկրների հետ, այնպես էլ ԱՊՀ երկրների հետ շատ կենտրոնացված է (Տե՛ս աղյուսակ 6, աղյուսակ 7):

**Աղյուսակ 6. ՀՀ արտաքին առևտուրը ԵՄ հիմնական գործընկեր երկրների հետ 2006թ. (մլն. դոլար)**

	Բեկզիա	Գերմանիա	Նիդերլանդներ	Իտալիա	Հունաստան
Արտահանում	108.8	148.0	126.9	28,9	0.6
Ներմուծում	157.1	85.0	22.2	76.4	80.6
Բաժինը ԵՄ ընդհ. ապրանք. մեջ (%)	22,8%	20,0%	12,8%	9,0%	6.9

*Աղբյուր. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուր, ՀՀ վիճակագրության ծառայություն*

Ամեն դեպքում, այլ հավասար պայմաններում, ԵՄ և ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը համեմատելիս, կարող ենք նշել, որ ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտուրն էլ ավելի կենտրոնացված է (միայն Ռուսաստանին բաժին է ընկնում 65,1%), քան ԵՄ երկրների հետ: ԵՄ հետ Հայաստանի արտաքին առևտրի կենտրոնացվածությունը մեկնաբանում է այն փաստը, որ ԵՄ 25 երկրներից Հայաստանի գլխավոր առևտրային գործընկեր երկրներն են՝ Բեկզիան, որին բաժին է ընկնում ընդհանուր ապրանքաշրջանառության 22,8%, Գերմանիան (20,0%), Նիդերլանդները (12.8%), Իտալիան (9.0), Հունաստանը (6.9%) և Ֆրանսիան (3,5%): Ընդհանուր առմամբ նշված երկրներին բաժին է ընկնում ԵՄ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի 75.0%:

**Աղյուսակ 7. ՀՀ արտաքին առևտուրը ԱՊՀ հիմնական գործընկեր երկրների հետ 2006թ. (մլն. դոլար)**


	Ռուսաստան	Վրաստան	Ուկրաինա
Արտահանում	121.1	54.6	22.5
Ներմուծում	364.7	75.6	109.1
Բաժինը ԱՊՀ ընդհ. ապրանքաշրջ.մեջ (%)	61.2	16,2	16.5

*Աղբյուր. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուր, ՀՀ վիճակագրության ծառայություն*

Եթե ԱՊՀ երկրների հետ առևտրում նկատվում է աշխարհագրական կենտրոնացվածության, ապա ԵՄ երկրների հետ առևտրում զգալի կենտրոնացվածություն է նկատվում ապրանքային կառուցվածքում: Ի տարբերություն ԵՄ երկրների հետ առևտրի, ԱՊՀ երկրների հետ առևտրում, մասնավորապես՝ Ռուսաստանի, ապրանքային կառուցվածքում առկա չէ զգալի կենտրոնացվածություն:

Այսպես, ՀՀ և ԵՄ հիմնական գործընկեր երկրների միջև արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում գերակշռում են մետաղները, մասնավորապես՝ սև մետաղներ, պղինձ և այլ ոչ թանկարժեք մետաղներ, թանկարժեք քարերը, մեքենաներ և սարքավորումները, քիմիական ապրանքները, տրանսպորտային միջոցները, սննդամթերքը և տեքստիլ իրերը (Տե՛ս գծանկար 15):

**Գծանկար 15. ԵՄ հետ արտաքին առևտրում գլխավոր ապրանքախմբերը 2006թ. (%)**



Աղբյուր. Eurostat, Statistical regime 4, Armenia

Հայաստանից ԵՄ արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում մետաղները, ընդ որում 2005թ. մետաղների բաժինը դեպի ԵՄ ընդհանուր արտահանման մեջ կազմել է 55%, իսկ 2006թ. 61.9%<sup>13</sup>: Մետաղներն արտահանվում են հիմնականում Գերմանիա և Նիդերլանդներ: Հայաստանից ԵՄ արտահանվում է նաև թանկարժեք քարեր (25.6%), որոնք ներմուծվում են, վերամշակվում և վերարտահանվում ԵՄ (մասնավորապես՝ Բելգիա), տեքստիլ իրեր (3.9%) և այլն:

2006թ. տվյալներով ԵՄ-ից Հայաստան ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել մեքենաներ և սարքավորումները, փոխադրամիջոցները, որոնց բաժին է ընկել ԵՄ-ից ընդհանուր ներմուծման 30.7%: Հայաստանը ԵՄ-ից ներմուծում է նաև թանկարժեք քարեր (27,6%), քիմիական ապրանքներ (7.4), սննդամթերք (6.7), տեքստիլ իրեր (5.8%) և այլն:


Այսպիսով, ԵՄ հիմնական գործընկեր երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում զգալի կենտրոնացում է նկատվում Բելգիայի և Նիդերլանդների հետ արտաքին առևտրում: Բելգիայի հետ արտաքին առևտրում՝ բացառապես թանկարժեք քարերի գծով, իսկ Նիդերլանդների հետ արտաքին առևտրում՝ բացառապես մետաղների գծով: Գերմանիայի, Իտալիայի Հունաստանի և

<sup>13</sup> Աղբյուր՝ Eurostat, Statistical regime 4, Armenia



Ֆրանսիայի հետ արտաքին առևտրում նկատվում է հարաբերականորեն որոշակի տարբերակվածություն (հիմնականում ներմուծման գծով):

**Գծանկար 16. Արտաքին առևտրի բաժինը ԵՄ հետ 2006թ, (%)**



Աղբյուր. Eurostat, Statistical regime 4, Armenia, Albania, Macedonia, Macedonia, Bosnia and Herzegovina, Rumania, Bulgaria

Ինչպես նկատում ենք գծանկար 16-ից, Հայաստանը ԵՄ հետ արտաքին առևտրի բաժնով դեռևս զիջում է նշված մյուս երկրներին, մասնավորապես՝ ներմուծման բաժնով: Համեմատության համար նշենք, որ դիտարկվող երկրների շարքում ԵՄ հետ արտաքին առևտրի համեմատաբար փոքր բաժնով առանձնանում են Մակեդոնիան (թեկնածու երկիր) և Բուլղարիան (ԵՄ անդամ): Ալբանիայի, Մակեդոնիայի, Բոսնիա և Հերցեգովինայի, Ռումինիայի և Բուլղարիայի ԵՄ հետ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը, ի տարբերություն Հայաստանի, բավական տարբերակված է: Ավելին, նշված երկրների արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում գերակշռում են պատրաստի սպառողական ապրանքները:

Աղյուսակ 8-ում բերված տվյալները փաստում են, որ ինչպես և Հայաստանի դեպքում, դիտարկվող երկրների արտաքին առևտրում մետաղները համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմում, մասնավորապես՝ Մակեդոնիայի, Բոսնիա և Հերցեգովինայի ու Բուլղարիայի: Սակայն, ի տարբերություն Հայաստանի, վերը նշված բոլոր երկրների արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը բավական տարբերակված է:

Աղյուսակ 8. ԵՄ հետ արտաքին առևտրում գլխավոր ապրանքախմբերը 2006թ. (%)

	Ալբանիա		Մակեդոնիա		Բոսնիա և Հերցեգովինա		Ռումինիա		Բուլղարիա	
	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.
Մեք. և սարք	4.1	17	2.8	15.1	17.8	19.9	24.8	28.5	12.7	26.0
Տեքստիլ իրեր	25.6	12.4	31.6	19.1	7.9	7.0	22.6	10.1	22.2	12.5
Հումք.	5.3	10.8	2.0	3.8	3.7	4.4	2.5	1.5	7	3.7
ապրանքաներ Քիմ.	-	8.7	-	11.6	3.5	8.8	2.1	8.1	3.3	9.8
ապրանքաներ Մետաղներ	15.4	8.6	41.9	10.5	26.1	9.2	11.8	9.2	28.1	8.4
Սննդամթերք	3.6	8.0	8.3	5.9	1.0	6.5	-	2.2	2.9	3.6
Տրանսպ. միջոցներ	-	5.9	-	10.5	2.4	14.1	7.7	17.1	1.4	14.6

Աղբյուր. Eurostat, Statistical regime 4, Armenia, Albania, Macedonia, Macedonia, Bosnia and Herzegovina, Rumania, Bulgaria

Այսպիսով, չնայած նրան, որ ՀՀ և ԵՄ միջև հարաբերությունները գնալով զարգանում են ՀՀ և ԵՄ միջև իրականացվող արտաքին առևտուրը չի զարգանում իր հնարավոր արդյունավետությամբ: Մասնավորապես ԵՄ հետ արտաքին առևտրի արտահանման կառուցվածքում գրեթե բացակայում են պատրաստի սպառողական ապրանքները (բացառությամբ Իտալիայի հետ արտաքին առևտրի): Այս հանգամանքը թերևս կարելի է բացատրել այն փաստով, որ հայական սպառողական ապրանքները ենթարկվում են գնային և որակական բարձր մրցակցության ԵՄ երկրների շուկաներում: Սակայն, ամեն դեպքում, մեր կարծիքով, այս սահմանափակումը կարելի է հետագայում բացառել համատեղ ձեռնարկությունների ստեղծման և ԵՄ երկրներից օտարերկրյա ներդրումների ներգրավման շնորհիվ: ԵՄ երկրների ձեռնարկատերերի հետ համատեղ ձեռնարկությունների ստեղծումը և օտարերկրյա ներդրումների ավելացումը թույլ կտան Հայաստանին հաղթահարել առկա տեխնոլոգիական բարդությունները և արտադրել մրցունակ արտադրանք, որը կարող է սպառվել ոչ միայն ԵՄ երկրներում, այլև համաշխարհային շուկայում:

### 3 Ինստիտուցիոնալ միջավայր

Ինստիտուտների դերը տնտեսության զարգացման գործում սկսեց առավել կարևորվել նախորդ դարի 80-ական թթ., երբ փորձ էր կատարվում բացատրել, թե ինչով է պայմանավորված երկրների զարգացվածության մակարդակների տարբերությունները: Սույն աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվող երկրների ինստիտուցիոնալ միջավայրի վերլուծությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.




Կենտրոնական բանկի անկախությունը, հավասարակշռված բյուջեի ապահովման մեխանիզմները, միջազգային առևտրի գոյություն ունեցող համաձայնագրերը և ձևաչափերը, ֆինանսական, աշխատուժի և ապրանքային շուկաները կարգավորող նորմերը:

Իրականացվող վերլուծության շրջանակներում մենք առանձնացրել ենք ինստիտուցիոնալ միջավայրի այն բաղադրատարրերը, որոնք առավել կարևոր են անցումային տնտեսությունների համար և որոնց արդյունավետ գործունեությունն իրական կյանքում հանդիպում է լուրջ խնդիրների: Քանի որ վերլուծության նախորդ հատվածների ամբողջ տրամաբանությունը կառուցված է առավելապես զուտ տնտեսական ցուցանիշների և համեմատությունների գնահատման վրա, ուստի այս դեպքում ևս ուսումնասիրության հիմնական առարկա է հանդիսացել տնտեսական բովանդակություն ունեցող շուկայական ինստիտուտները (չնայած, որ նման տարանջատում դժվար է կատարել և այն ամեն դեպքում կրում է սուբյեկտիվ բնույթ):

Որպեսզի ավելի պարզ դառնա ինստիտուցիոնալ միջավայրի և երկրի տնտեսական զարգացման միջև եղած դրական փոխկապակցվածությունը, ինչպես նաև հաստատվի մեր կողմից ընտրված ինստիտուտների կարևորությունը՝ մենք կառուցել ենք երկրի ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման մակարդակի ինդեքս: Ինդեքսը հաշվարկվել է ելնելով յուրաքանչյուր ընտրված ինդիկատորի համար երկրների դիրքերի (արտահայտված տոկոսներով) միջինացված արժեքից:

**Գծանկար 98. Ինստիտուցիոնալ միջավայրի և տնտեսական զարգացվածության փոխկապակցվածությունը:**



Աղբյուր. *Governance Indicators, Transition Report, Doing Business, WDI World Bank&EBRD, 2005-2006*

Ինչպես երևում է գծանկար 18-ից, անցումային տնտեսություն ունեցող երկրներում ինստիտուտների ավելի բարձր մակարդակին համապատասխանում է մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ավելի բարձր մակարդակ:

Մեր կողմից ընտրված ինդիկատորներն են՝

**«Կարգավորման որակ»<sup>15</sup>:** Գնահատում է, թե ինչպես է կառավարությունը կազմում և իրականացնում առողջ քաղաքականություն, ներմուծում կարգավորիչ մեխանիզմներ ու խրախուսում մասնավոր ոլորտի զարգացմանը:

**«Օրենքի գերակայություն»:** Հիմնված է մի քանի ցուցանիշների վրա, որոնք հնարավորություն են տալիս պարզելու, թե որքանով են տնտեսական գործակալները վստահում օրենքներին և ենթարկվում դրանց: Սա իր մեջ ներառում է արդարադատության արդյունավետությունը և կանխատեսելիությունը, պայմանագրերի կատարման պարտադրումը, ինչպես նաև հանցավորության աստիճանի ընկալումը:

**«Կոռուպցիայի վերահսկում»** Մատնանշում է կոռուպցիայի ընկալման աստիճանը, որը պայմանականորեն բնորոշվում է իբրև հանրային իշխանության իրականացում՝ մասնավոր օգուտ ստանալու նպատակով:

**«Հակամենաշնորհային քաղաքականություն»<sup>16</sup>** Սույն ցուցանիշը ներկայացնում է պետության պատրաստակամությունը և կարողությունն իրականացնել արդյունավետ մրցակցային քաղաքականություն: Ցուցանիշի հաշվարկման ժամանակ հաշվի են առնվում մրցակցային միջավայրի ապահովման համար անհրաժեշտ օրենսդրական և ինստիտուցիոնալ լուծումների առկայությունը, մենաշնորհ ունեցող ընկերությունների նկատմամբ համապատասխան միջոցառումների իրականացումը, ընդհանուր հակամենաշնորհային քաղաքականության իրականացման արդյունավետությունը:

**«Բիզնեսի վարում»** Համաշխարհային բանկն արդեն մի քանի տարի է ինչ իրականացնում է բիզնեսի վարման հետ կապված գործընթացների տևողության և արժեքի գնահատում՝ ելնելով հիմնականում օրենսդրության վերլուծության արդյունքներից և ինչ որ մասով նաև փորձագիտական գնահատականներից: Սույն համեմատության շրջանակներում մենք դիտարկել ենք բիզնեսի վարման հետևյալ մեր կարծիքով, հիմնական պարամետրերը.

- Բիզնեսի հիմնադրումը,
- Գործունեության համար լիցենզիայի/ների/ ստացումը,
- Վարկ ձեռք բերելու հնարավորությունը,

<sup>15</sup> Kauffman, Governance Matters VI

<sup>16</sup> Transition report 2006

- Հարկերի վճարումը,
- Ներմուծում և արտահանումը,
- Բիզնեսի փակումը:

Համաձայն Համաշխարհային բանկի մեթոդոլոգիայի հաշվի են առնվում այն գործընթացները և դրանց հետ կապված ծախսումները, որոնք արտացոլվում են օրենքներում և կանոններում (այսինքն՝ ձևայնացված են): Խոսքը գնում է նորմատիվ գործընթացների մասին և ոչ թե դրանց փաստացի տևողության և ծախսումների մասին: Ստորև Հայաստանի օրինակով մենք կտեսնենք թե ինչպիսի նշանակալից տարբերություններ գոյություն ունեն ֆորմալ գնահատականների և իրական կյանքում գործող ձեռնարկությունների կարծիքների միջև: Ինչևէ, մենք կարծում ենք, որ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով սահմանվող ֆորմալ «խաղի կանոնները» նույնպես կազմում են ինստիտուցիոնալ միջավայրի կարևորագույն մասը:

Ինչպես երևում է գծանկար 18-ից, մեր կողմից ընտրված երկրները և Հայաստանն այս երկրների շարքում զբաղեցնում են միջին դիրք, ինչպես ինստիտուցիոնալ զարգացման, այնպես էլ եկամտի մակարդակի առումով:

Նախքան ինստիտուցիոնալ միջավայրի առանձին տարրերի ավելի մանրամասն վերլուծություն իրականացնելն անդրադառնանք ՀՀ ինստիտուցիոնալ զարգացման հիմնական առաձևահատկություններին: Ինչպես արդեն նշվել է, Հայաստանը, այլ անցումային տնտեսություն ունեցող երկրների նման, հիմնականում ներմուծել է շուկայական տնտեսությամբ բնորոշ ինստիտուտներ՝ առաջնորդվելով զարգացած և այլ անցումային երկրների լավագույն փորձով: Հաջորդ կարևոր առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այս կամ այն ինստիտուտի զարգացման առաջնահերթությունը տվյալ պահին շատ անգամ պայմանավորված է եղել հիմնական դոնոր կազմակերպությունների /պետությունների/ գնահատականներով և առաջարկություններով: Այսպես, բարեփոխումների ներկա փուլը առավելապես պայմանավորված է Եվրոպական միության հետ համագործակցության խորացման քաղաքականությամբ: 2006թ. նոյեմբերին Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև ստորագրված Հարևանության քաղաքականության գործողությունների ծրագիրը սահմանում է բարեփոխումների առաջնահերթությունները մոտակա մի քանի տարիների համար: Դրանց հիմնականում համահունչ են նաև ԱՄՆ Չարգացման գործակալության և Հազարամյակի մարտահրավերների կորպորացիայի կողմից տրամադրվող աջակցության շրջանակներում ուրվագծվող բարեփոխումները: Համադրելով

Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրում նշված կարևորագույն հիմնախնդիրները և ձեռնարկությունների կողմից տարբեր ուսումնասիրությունների և հարցումների շրջանակներում բացահայտված բիզնեսի վարմանը խոչնդոտող ինստիտուցիոնալ անկատարությունները, ստորև մենք հակիրճ վերլուծել ենք մեր կարծիքով առավել խնդրահարույց ինստիտուտները:

### **3.1 Օրենքի գերակայություն և պայմանագրերի կատարման պարտադրում**

Ղատական համակարգի դերն արդյունավետ տնտեսական համակարգի կայացման գործում դժվար է գերազնահատել: Միայն այն դեպքում, երբ դատական համակարգը կարողանում է ապահովել սեփականության իրավունքների և տնտեսական փոխհարաբերություններում ծագող վեճերի արագ, արդյունավետ և արդարացի լուծում, երկիրը կարող է ունենալ երկարաժամկետ հաջողություններ շուկայական տնտեսության զարգացման ճանապարհին:

Այս առումով, Հայաստանի Հանրապետությունը բավականին հետաքրքրաշարժ օրինակ է: Բարեփոխումները դատական համակարգում սկսվեցին ավելի ուշ, քան մնացած ոլորտներում, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ՀՀ առաջին սահմանադրությունը ընդունվեց միայն 1995թ.: Սկսած 1996թ. միջազգային դոնոր կազմակերպությունների անմիջական աջակցությամբ ՀՀ կառավարությունը շարունակաբար իրականացնում էր միջոցառումներ, որոնց նպատակն էր բարձրացնել դատական համակարգի որակը և անկախության աստիճանը: Սակայն սահմանադրության ներքին տրամաբանությունը զգալի խոչընդոտներ էր առաջացնում դատական համակարգի անկախության ինստիտուցիոնալ հիմքերի կայացման համար, որը մի շարք այլ հիմնախնդիրների հետ մեկտեղ պատճառ դարձավ սահմանադրական բարեփոխումների ծրագրի իրագործման համար: 2005թ. հանրաքվեի արդյունքում ընդունվեց սահմանադրության բարեփոխված տարբերակը, որը ըստ փորձագետների նշանակալիորեն կրճատում է իշխանության գործադիր մարմինների ազդեցությունը դատական որոշումների կայացման գործում և նոր՝ ավելի ընդարձակ դաշտ ստեղծում հետագա բարեփոխումների համար:

Այս ամենը, առնվազն ֆորմալ տեսանկյունից, պետք է հանգեցնեք դատական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Համաձայն արդեն նշված Համաշխարհային բանկի գնահատականների Հայաստանը տնտեսական վեճերի լուծման դյուրինության տեսանկյունից ավելի քան 170 երկրների շարքում զբաղեցնում է 18-րդ տեղը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են

տնտեսական պայմանագրերի կատարումը պարտադրող երեք ցուցանիշները մեր կողմից ուսումնասիրվող երկրների համար:


**Աղյուսակ 9. Պայմանագրի պայմանների կատարման պարտադրում (2006թ.)**

	Դիրք	Գործընթացներ (քանակ)	Ժամանակ (օր)	Մասն (պահանջվող պարտքի %)
Հայաստան	18	24	185	14
Ռումինիա	45	43	335	10.7
Մակեդոնիա	99	27	509	32.8
Բուլղարիա	52	34	440	14
Ալբանիա	93	39	390	22.6
Բոսնիա և Հերցեգովինա	117	36	595	19.6

*Աղբյուր. Doing Business, World Bank, 2007*

Ելնելով աղյուսակ 9-ից կարելի է եզրակացնել, որ պայմանագրերի կատարման պարտադրման կտրվածքով Հայաստանում գոյություն ունեցող խնդիրներն այդքան էլ լուրջ չեն և որոշում կայացնող քաղաքական գործիչները պետք է ուշադրություն սևեռեն այլ առավել կարևոր խնդիրներին: Սակայն, եթե անդրադառնանք Համաշխարհային բանկի ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից համատեղ կատարված մեկ այլ ուսումնասիրության, որը հիմնված է ձեռնարկությունների շրջանում անցկացված հարցումների արդյունքների վրա, կատանանք այլ պատկեր: Այսպես, 200 ձեռնարկությունների հարցումները վկայում են, որ Հայաստանում գործող ձեռնարկությունները, ի տարբերություն այլ անցումային երկրների, ամենից քիչ են դիմում դատարան՝ առևտրային վեճերի լուծման համար (Տե՛ս գծանկար 19):

**Գծանկար 19. Առևտրային վեճերը լուծելու համար դատարան դիմողների բաժինը**



*Աղբյուր. BEEPS, World Bank&EBRD, 2005*

Եթե սրան հավելենք այն փաստը, որ Հայաստանում գրեթե չեն գործում վեճերի լուծման այլընտրանքային տարբերակներ /օրինակ՝ արբիտրաժ/, ապա պարզ է



դառնում, որ ձեռնարկությունների մեծամասնությունը փաստորեն չի դիտարկում դատարանները որպես պայմանագրերի կատարման պարտադրման մատչելի և արագ միջոց, ինչը վերոնշյալ աղյուսակի տվյալների պայմաններում տալիս է հակասական պատկեր:

ՀՀ դատական համակարգի բարեփոխումներին ուղղված տարբեր ծրագրերի ուսումնասիրությունը վկայում է, որ որպես առանցքային հիմնախնդիր այդ ոլորտում դիտարկվում է դատավորների և դատական համակարգի այլ մասնակիցների մասնագիտական որակավորման ցածր մակարդակը և անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը: Այս համակարգի բարեփոխման գործին այս կամ այն կերպ մասնակցել են գրեթե բոլոր դոնոր կազմակերպությունները: Սակայն ամենից ակտիվ գործել և շարունակում են գործել Համաշխարհային բանկը, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «ABA CEELI» նախաձեռնությունը և Եվրոպական միությունը: Այսպես, Համաշխարհային բանկը սկսել է դատական բարեփոխումների առաջին ծրագիրը 2000թ. և մինչև 2006թ. սատարել է դատական ենթակառուցվածքների, դատական վարչարարության բարելավմանը միտված միջոցառումների, դատարանների անձնակազմերի վերապատրաստումների, օրենքների մատչելիությանը և այլն: ABA CEELI – Օրենքի գերակայություն նախաձեռնությունն աջակցել է ՀՀ դատական համակարգի մի շարք ձեռքբերումների, մասնավորապես՝ ՀՀ դատավորների միության ստեղծմանը, դատավորների վարքագծի նոր կանոնակարգի ընդունմանը, փաստաբանների նոր պալատի ստեղծմանը, դատավորների վերապատրաստումներին և այլն<sup>17</sup>: ԵՄ աջակցությունն այս ոլորտում առավելապես պայմանավորված է եղել օրենսդրական բարեփոխումներով՝ դեպի ԵՄ օրենսդրություն մոտարկելու տեսանկյունից:

Ինչպես երևում է իրականացված և պլանավորվող ծրագրերի հակիրճ ներկայացումից, ըստ միջազգային փորձագետների, ՀՀ դատական համակարգի կարևորագույն խնդիրներից են դատարանների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը և դատավորների մասնագիտական որակավորման անհամապատասխանությունը ներկայիս պահանջներին: Ներկայումս սկսվել է այդ ոլորտի բարեփոխումների այսպես կոչված երկրորդ փուլը: Հարկ է նշել, որ դատական համակարգի բարեփոխումները չափազանց կարևոր են և դրանց հաջողությունը մեծապես պայմանավորված է երկրի իշխանությունների քաղաքական կամքից և անկախության աստիճանից:

<sup>17</sup> [www.abanet.org/ceeli/countries/armenia/home.html](http://www.abanet.org/ceeli/countries/armenia/home.html)

### 3.2 Մրցակցային միջավայրի ապահովում

Հայաստանի Հանրապետությունում մրցակցային միջավայրի պաշտպանության համար առաջին իրական ինստիտուցիոնալ լուծումը տրվեց 2000թ., երբ ընդունվեց «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը և 2001թ. ստեղծվեց Մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով:

Ներկայումս, համաձայն Չարգացման և վերակառուցման եվրոպական բանկի անցումային երկրների մասին հաշվետվության, Հայաստանն ազատ տնտեսական մրցակցության ապահովման գործում 2006թ. առավելագույն հնարավոր 4+ բալլից հավաքել է 2+ բալ, ինչը նշանակում է, որ «Հայաստանում ընդունվել է հակամենաշնորհային օրենսդրություն և ստեղծվել են համապատասխան մարմիններ, շուկայի նոր մասնակիցների համար վերացվել են մի շարք սահմանափակումներ կամ մենաշնորհ ունեցող ձեռնարկությունների նկատմամբ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ»: Ընդունման պահից ի վեր ՀՀ մրցակցային օրենսդրությունը պարբերաբար լրամշակվել և փոփոխվել է՝ արձագանքելով նրա մեջ եղած բացերին և տնտեսության պահանջներին: Վերջին փոփոխությունները կատարվել են 2007թ., ներառյալ՝ Հանձնաժողովին ստուգման իրավունքի շնորհումը, մրցակցային համաձայնությունների ապացուցմանը վերաբերող դրույթը, «հանդուրժողականության» ծրագիրը (leniency program), մրցույթների և աճուրդների ժամանակ տնտեսվարողների միջև պայմանավորվածությունները որպես մրցակցային համաձայնություններ համարելը:

Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնն իրականացրել է մրցակցության և պետական աջակցության ոլորտներում ինստիտուցիոնալ կարողությունների բավականին խորը վերլուծություն: Համաձայն այդ գնահատման, օրենսդրական փոփոխությունները կտան իրենց դրական արդյունքը, եթե դրանց համապատասխան իրականացվեն կառուցվածքային փոփոխություններ Հանձնաժողովում, ընդունվեն անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտեր և բարձրացվի Հանձնաժողովի ֆինանսավորման մակարդակը:

Սակայն, մրցակցային միջավայրի ապահովման գործում հնարավոր չէ սահմանափակվել միայն անմիջապես Հանձնաժողովի կարողությունների մակարդակի բարձրացմամբ: Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում ԵՄ պահանջներից է դատարանների կարևոր դերակատարությունը մրցակցության պաշտպանության գործում: Հայաստանում հավասար մրցակցային դաշտի ապահովման զգալի խոչընդոտներից մեկը դա այն է, որ դատավորները չունենալով առարկայի բավարար գիտելիքներ և առանց որևէ արտաքին փորձագիտական

օգնության փորձում են մեկնաբանել Հանձնաժողովի մասնագիտական եզրակացությունները և որոշումներ կայացնում իրենց մեկնաբանությունների հիման վրա: Ակնհայտ է դառնում, որ ազատ մրցակցության ապահովման գործում կրկին հանդիպում ենք օրենքի գերակայության և արդյունավետ դատական համակարգի առկայության նախապայմանին:

### 3.3 Ընդհանուր Բիզնես միջավայրի ինստիտուցիոնալ հիմքեր

Ըստ Համաշխարհային բանկի գնահատականների, Հայաստանը Բիզնեսի կազմակերպման և վարման դյուրինության տեսանկյունից աշխարհի 175 երկրների շարքում զբաղեցնում է 34-րդ տեղը և այս ցուցանիշով գերազանցում է ԱՊՀ անդամ բոլոր երկրներին և նույնիսկ ԵՄ անդամ մի շարք պետություններին: Ինչևէ, ոչ բոլոր ոլորտներում է Հայաստանը զբաղեցնում առաջատար դիրքեր: Այսպես, Բիզնես միջավայրի և ձեռնարկությունների գործունեության ուսումնասիրությունը (BEEPS) վկայում է, որ 2005թ. ձեռնարկությունների գնահատականներով Հայաստանում ձեռնարկատիրական գործունեությանը խոչընդոտող ամենակարևոր գործոնը հարկային վարչարարությունն է:

**Աղյուսակ 80. Հարկային վարչարարության բաղադրիչներ**

2005	Ալբանիա	Հայաստան	Բոսնիա և Հերցեգովինա	Բուլղարիա	Ռումինիա
Հարկային վարչարարությունը որպես բիզնեսի վարման խոչընդոտ	60%	62%	32%	31%	65%
Վճարումների քանակ	42	50	73	27	89
Հարկեր վճարելու ժամ. (ժամ)	240	1120	100	616	198
Ընդ. հարկային դրույք (շահույթի %)	55.8%	42.5%	50.4%	40.7%	48.9%

*Աղբյուր. BEEPS, Doing business, World bank & EBRD, 2005-2007*

Ներդրողների և գործող ձեռնարկատերերի շրջանում 2003 և 2004 թթ. ընթացքում անցկացված հարցումները վկայում են, որ հարկային համակարգի և վարչարարության հետ կապված խնդիրները դիտարկվում են որպես լրջագույն թերություն Հայաստանի մասնավոր հատվածի զարգացման ճանապարհին: Այսպես, հարցմանը մասնակցածների 75% նշել է, որ հարկային համակարգում ամենից հաճախ հանդիպող խնդիրներն են՝ Ավելացված արժեքի հարկի փոխհատուցման դժվարությունները, կանխավճարներ կատարելու պահանջները և հարկային իշխանությունների անօրինական գործողությունները<sup>18,19</sup>: Մյուս կողմից, ի տարբերություն տարածաշրջանի մյուս երկրների, ՀՀ-ում հավաքագրվող հարկերի


<sup>18</sup> The American and European Union Chambers of Commerce in Armenia, Joint White Paper, “**Reform of Armenian Tax System: The Foreign Investors’ Perspective**”, August 2003


<sup>19</sup> Совместная программа Всемирного Банка и Международной Финансовой Корпорации - Консультативная служба по иностранным инвестициям (FIAS), “**Оценка административных барьеров для предпринимательской деятельности в Армении**”, 2004г.

բաժինը ՀՆԱ-ում կազմում է շատ ցածր ցուցանիշ, որի հիմնական պատճառներից մեկն էլ հենց համարվում է վարչարարության մեջ տեղ գտած թերությունները: Այսպիսով, մի կողմից ձեռնարկությունները նշում են անհարկի ճնշումները հարկային մարմինների կողմից, մյուս կողմից վերջիններս ստիպված են ավելի խստացնել վարչարարությունը ՀՆԱ-ի աճի տեմպերի և հարկային եկամուտների աճի միջև հարաբերակցության պահպանման նպատակով: Կարևորագույն հիմնախնդիրներից է նաև այն, որ ստվերային ոլորտում գործում են նաև խոշոր ձեռնարկություններ, որոնք շատ անգամ այս կամ այն կերպ կարողանում են խուսափել հարկերից, իսկ վարչարարության խստացումը ավելի շատ անդրադառնում է փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության վրա՝ էլ ավելի դժվարացնելով դրանց հետագա զարգացացումը:

Ստորև ներկայացված է բիզնես միջավայրի տարբեր կողմերը բնութագրող ամփոփ համեմատական պատկերը: Ինչպես նկատում ենք գծանկար 20-ից, Հայաստանը, բացի նշված հարկային վարչարարության ոլորտից առանձնապես չի զիջում դիտարկվող երկրներին և մի քանի ոլորտներում նույնիսկ առավելություն ունի: Սակայն, հարկ է ևս մեկ անգամ շեշտել, որ նշված ցուցանիշներն ավելի շատ հիմնված են ընթացակարգերի գնահատման վրա և կարող են տարբերվել իրական կյանքից:

**Գծանկար 20. Բիզնես միջավայրի մի շարք բնութագրիչներ**





Աղբյուր. Doing business, World bank, 2003-2006

#### 4. ԵՄ անդամակցության պատրաստվածության գնահատման ինդեքս

Այս ինդեքսը հաշվարկվել է ներկայացվել է PWC-ի (Price Waterhouse Cooper , PWC) կողմից ԵՄ-15 ու 2004թ. անդամակցած ԵՄ-10<sup>20</sup> երկրների համար 2002թ.<sup>21</sup>: Ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած են չորս ցուցանիշներ՝ իրենց բաղադրիչներով (Տե՛ս աղյուսակ 11): Մեր դեպքում ինդեքսը հաշվարկվել է պոտենցիալ թեկնածու (Ալբանիա ու Բոսնիա և Հերցեգովինա), թեկնածու (Մակեդոնիա), ԵՄ-8 (բացի Կիպրոսից ու Մալթայից), ԵՄ-2(Ռումինիա և Բուլղարիա) երկրների ու Հայաստանի համար: Յուրաքանչյուր երկրի համար ցուցանիշների բոլոր բաղադրիչները ստանդարտացվել են, որից հետո դրանք համախմբելով կառուցվել է ինդեքսը:

Աղյուսակ 11. ԵՄ անդամակցության պատրաստվածության գնահատման ինդեքսի ցուցանիշներ


Ցուցանիշ	Բաղադրիչներ
Մակրոտնտեսական կայունություն	ՀՆԱ-ի աճ (%) 2000-2005թթ. Ինֆլյացիայի մակարդակ (%) Գործազրկության մակարդակ(%) Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %) Պետական պարտք (ՀՆԱ-ի %) Պետական ծախսերի հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)
Տնտեսության կառուցվածքը	Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (PPP)

<sup>20</sup> 2004թ. անդամակցած ԵՄ -10 երկրներն են՝ Կիպրոսը, Չեխիան, Էստոնիան, Նունգարիան, Լատվիան, Լիտվան, Մալթան, Լեհաստանը, Սլովակիան և Սլովենիան:

<sup>21</sup>“Enlarging the European Union: are the economies of accession candidates ready?”, PWC, EU enlargement barometer 2002.

	Գյուղատնտեսության բաժինը ՀՆԱ-ում
<b>Ենթակառուցվածք</b>	Կապիտալի կուտակում (ՀՆԱ-ի %) Հեռախոսագծերի թիվը (1000 մարդու հաշվով) Բջջային հեռախոսներով ծածկվածությունը (%) Ինտեռնետ բաժանորդների թիվը (1000 մարդու հաշվով) Մեկ շնչին բաժին ընկնող սպառվող էլեկտրաէներգիա (kWh) Բարձրագույն կրթական հաստատություններում ներգրավվածներ Գիտահետազոտական աշխատանքներ (ՀՆԱ-ի %)
<b>Տնտեսական ինտեգրացիա (ԵՄ հետ)</b>	Արտահանում ԵՄ (ամբողջ արտահանման %) Ներմուծում ԵՄ (ամբողջ ներմուծման %) ՕՈՒՆ (ՀՆԱ-ի %)

**Գծանկար 21. ԵՄ անդամակցության պատրաստվածության գնահատման ինդեքս**



Ինչպես նկատում ենք գծանկար 21-ից, համաձայն ԵՄ անդամակցության պատրաստվածության գնահատման ինդեքսի, դիտարկվող երկրների շարքում Հայաստանը, Ալբանիան (պոտենցիալ թեկնածու երկիր) և Մակեդոնիան (թեկնածու երկիր) գրեթե գտնվում են միևնույն հարթության վրա: Ոչ ԵՄ անդամ երկրներից համեմատաբար լավ դիրք ունի Բոսնիան և Հերցեգովինան, որը համարվում է պոտենցիալ թեկնածու երկիր:

## Վերջաբան

1. Սեփականշնորհման գործընթացը Հայաստանում արդեն կարելի է համարել ավարտված (մասնավոր սեփականության բաժինը կազմում է 84%): Հայաստանում սեփականաշնորհման գործընթացի հետ մեկտեղ զուգահեռ ստեղծվել են նոր փոքր և միջին ձեռնարկություններ: Փոքր և միջին ձեռնարկություններին բաժին է ընկնում ՀՆԱ-ի 40.3%, իսկ ոլորտում ներգրավված է տնտեսապես ակտիվ բնակչության՝ 34.0%: ՀՆԱ-ում փոքր և միջին ձեռնարկությունների բաժնի ցուցանիշով Հայաստանին զիջում են միայն Բուլղարիան (30.0%) և Հունգարիան (36.9%): Սակայն, նշված երկրները փոքր և միջին ձեռնարկություններում ներգրավված աշխատուժի բաժնի իրենց ցուցանիշներով գերազանցում են Հայաստանի ցուցանիշին:

2. Հայաստանում տնտեսապես ակտիվ բնակչության գերակշիռ մասը (ավելի քան 40%) ներգրավված է գյուղատնտեսության ոլորտում, որը ապահովում է ՀՆԱ-ի 20.5%: ԵՄ անդամակցած նոր երկրներում այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար միջինում 20.0 և 4,5%: Ավելին, Հայաստանում ծառայությունների ոլորտին բաժին է ընկնում ՀՆԱ-ի 35.2%, իսկ ԵՄ անդամակցած նոր երկրներում այդ ցուցանիշը գերազանցում է միջինում 60.0%:

Երիտասարդների շրջանում գործազրկությունը կազմել է ավելի քան 43.0%: Ավելին, Հայաստանում երիտասարդների զգալի մասը ոչ աշխատում է, ոչ էլ սովորում: Ընդհանուր առմամբ, դիտարկվող երկրների շարքում, բացի Մակեդոնիայից, Հայաստանն առանձնանում է երիտասարդների շրջանում իր համեմատաբար բարձր գործազրկության մակարդակով:

Գիտության զարգացմանն ուղղված ընդհանուր ծախսերը կազմել են 10.5 մլն. դոլար (ՀՆԱ-ի 0.2%): Գիտության զարգացման ընդհանուր ծախսերի ավելի քան 45% բաժին է ընկել միջազգային աղբյուրներին: Ռումինիայում գիտության զարգացման ծախսերը կազմել են 394.2 մլն. դոլար (ՀՆԱ-ի 0.4%), իսկ Բուլղարիայում 133.2 մլն. դոլար (ՀՆԱ-ի 0.5%):

Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան տասնամյակներ շարունակ գիտության և տեխնոլոգիաների զարգացման գործում հանդիսացել է առաջնորդ: Սակայն, ներկայումս դրա լաբորատորիաներից մեծ մասը գտնվում են վատ պայմաններում, գիտնականների մեծ մասը ծեր են կամ չեն կարողանում հարմարվել շուկայական տնտեսության պայմաններին: Ազգային ակադեմիայի հետազոտությունների հիմնական մասն իրականացվում է միջազգային աղբյուրների օժանդակությամբ:

Ելնելով Հայաստանի աշխարհագրական դիրքից և հաշվի առնելով բնական ռեսուրսների սակավությունը կարելի է փաստել, որ հետագա տնտեսական աճը պետք է հիմնվի ոչ թե ավանդական տնտեսական գործունեության վրա, այլ «գիտելիքի վրա հիմնված» տնտեսության վրա:

Ներկայիս պայմաններում Հայաստանը «գիտելիքի վրա հիմնված» տնտեսության կառուցման ճանապարհին ունի հետևյալ հիմնախնդիրները.

- բարձր կրթական մակարդակ և մոտիվացիա ունեցող անհատների արտահոսք,
- կրթության և գիտահետազոտական աշխատանքներին հատկացվող պետական ֆինանսավորման անբավարար մակարդակ,
- տեղական ձեռնարկչատիրական գործունեության թույլ մակարդակ (մասնավոր հատվածը գրեթե չի ֆինանսավորում գիտահետազոտական աշխատանքներին):

3. Հայաստանում, ի տարբերություն նշված մյուս երկրների, բավական փոքր է օտարերկրյա բանկերի ակտիվների բաժինը ընդհանուր ակտիվներում, մասնավոր հատվածի վարկավորման, արժեթղթերի շուկայի կապիտալիզացիայի և արժեթղթերի շրջանառության ցուցանիշները: Նշված երկրների շարքում օտարերկրյա բանկերի ակտիվների համեմատաբար փոքր բաժնով առանձնանում է նաև Մակեդոնիան (51.3%): Մասնավոր հատվածի վարկավորման համեմատաբար փոքր ցուցանիշներ ունեն նաև Ալբանիան (10.3%) և Ռումինիան (10.2%): Սակայն, ի տարբերություն Հայաստանի և Ալբանիայի, Ռումինիայում բավական մեծ են արժեթղթերի շուկայի կապիտալիզացիայի և արժեթղթերի շրջանառության ցուցանիշները:

Հայաստանի կապիտալի շուկան արժեթղթերի շուկայի կապիտալիզացիայի և արժեթղթերի շրջանառության ցուցանիշներով զգալի զիջում է դիտարկվող մյուս երկրների կապիտալի շուկայի նմանատիպ ցուցանիշներին:

Հայաստանի ֆինանսական հատվածում լուրջ հիմնանդիրներով առանձնանում է արժեթղթերի շուկան: Չնայած իր զարգացած ենթակառուցվածքին Հայաստանում արժեթղթերի շուկան չափազանց փոքր և ոչ իրացվելի է: Ֆինանսական շուկայի հետագա զարգացմանը խոչընդոտում է արժեքավոր ձեռնարկությունների շուկայում վաճառվող արժեթղթերի բացակայությունը, ինչպես նաև թույլ կորպորատիվ կառավարման համակարգը: Ամեն դեպքում վերջին շրջանում պետական պարտատոմսերի երկրորդական շուկայի զարգացմանն ուղղված միջոցառումները կարող են զգալի բարելավել ֆինանսական շուկայի կայունությունը:

4. 1998թ. մինչև օրս Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառությունը ԵՄ հետ անընդհատ աճել է՝ 2006թ. կազմելով 1164.5 մլն. դոլար (2006թ. ԵՄ հետ արտաքին



ապրանքաշրջանառության ծավալը գրեթե երկու անգամ գերազանցել է ԱՊՀ երկրների հետ ապրանքաշրջանառությանը):

ԵՄ հետ ՀՀ արտաքին առևտրի և՛ աշխարհագրական, և՛ ապրանքային կառուցվածքը խիստ կենտրոնացված է: Հայաստանը ԵՄ հետ արտաքին առևտրի բաժնով դեռևս զիջում է նշված մյուս երկրներին, մասնավորապես՝ ներմուծման բաժնով: Դիտարկվող երկրների շարքում ԵՄ հետ արտաքին առևտրի համեմատաբար փոքր բաժնով առանձնանում են Մակեդոնիան (թեկնածու երկիր) և Բուլղարիան (ԵՄ անդամ): Սակայն, Ալբանիայի, Մակեդոնիայի, Բոսնիա և Հերցեգովինայի, Ռումինիայի ու Բուլղարիայի ԵՄ հետ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը, ի տարբերություն Հայաստանի, բավական տարբերակված է: Ավելին, նշված երկրների արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում գերակշռում են պատրաստի սպառողական ապրանքները:

5. Ինչպես ցույց են տալիս ինստիտուցիոնալ զարգացվածության աստիճանը բնութագրող տարբեր ցուցանիշները, մեր կողմից դիտարկվող երկրները գտնվում են նույն կամ շատ մոտ հարթությունների վրա: Տնտեսական բարեփոխումների հիմնական խոչընդոտ են հանդիսանում օրենքի գերակայության սկզբունքի ոչ լիարժեք կիրառումը և ազատ շուկայական տնտեսություն ունենալու համար նախապայման հանդիսացող մրցակցային միջավայրի պաշտպանության հարցում տիրող իրավիճակը: Հայաստանը բացասական առումով աչքի է ընկնում հարկային վարչարարության թույլ համակարգով: Ֆորմալ առումով դատական գործընթացները /դրանց տևողության և արժեքի առումով/ ընդունելի մակարդակի վրա են, սակայն ձեռնարկությունների փոքր թիվը, որոնք դիմում են դատարան առևտրային վեճերի լուծման նպատակով, հուշում է այդ համակարգում տեղ գտած խորքային խնդիրների մասին:

6. Սույն վերլուծության շրջանակներում մակերեսորեն վերլուծվեց Հայաստանի և Արևելյան ու Հարավ-Արևելյան Եվրոպայի հինգ երկրների տնտեսական և ինստիտուցիոնալ իրավիճակը՝ Կոպենհագենի տնտեսական չափանիշների տեսանկյունից: Ընդհանուր եզրակացությունն այն է, որ տնտեսական ցուցանիշների համեմատական վերլուծության արդյունքները որոշ չափով լավատեսություն են ներշնչում Եվրաինտեգրման ուղին որդեգրելու համար: Սակայն, մյուս կողմից, եթե հաշվի առնենք Ռումինիայի և Բուլղարիայի անդամակցության առավելապես քաղաքական դրդապատճառները և ԵՄ ղեկավարաների կողմից բազմիցս հնչեցրած կարծիքները այդ երկրների՝ այսպես կոչված «արտոնյալ անդամակցության», վերաբերյալ, ապա պարզ է դառնում, որ զարգացվածության ներկայիս մակարդակը և

գոյություն ունեցող կառուցվածքային խնդիրները կարող են կարևոր խոչընդոտ հանդիսանալ հետագայում:

7. Համաձայն ԵՄ անդամակցության պատրաստվածության գնահատման ինդեքսի, դիտարկվող երկրների շարքում Հայաստանը, Ալբանիան (պոտենցիալ թեկնածու երկիր) և Մակեդոնիան (թեկնածու երկիր) իրենց տնտեսությունների մակրոտնտեսական իրավիճակով գրեթե գտնվում են միևնույն հարթության վրա: Ոչ ԵՄ անդամ երկրներից համեմատաբար լավ դիրք ունի Բոսնիան և Հերցեգովինան, որը համարվում է պոտենցիալ թեկնածու երկիր:

### **Օգտագործված գրականություն**

1. “Agenda 2000 communication, volume I: for wider and stronger Union”, European Commission, Strasbourg, 15 July 1997, DOC/97/6.
2. “EU-Armenia Cooperation and the New European Neighborhood Policy” Sergey Minasyan, 2006
3. “Neighborhood Relations Between The EU And Armenia”, Aghasi Harutyunyan, 2006
4. Hanzs-Juergen Zahorka “How Armenia Could Approach the European Union, 2005
5. “Science and Technology in Armenia: Toward a Knowledge-Based Economy” National Academy of Sciencies, 2004
6. Rafat Antczak, Matgorzata Antczak “Bosnia and Herzegovina-Meeting Copenhagen Economic Criteria for Accession to the EU”, Warsaw 2007
7. Adnan Filipovic “Impact of Privatization on Economic Growth”, Issues in Political Econmy, Vol.14, 2005
8. Albania: Financial System Stability Assessment, International Monetary Fund, 2005
9. Yibin Mu, Ramin Shojai “Armenia Banking and Insurance Sector” Washington, D.C., 2004
10. Paczynski, W. et al (2007), “Romania in Transition – Growth, Jobs and Poverty”, in S. Klasen, A. McKay and M. Grimm (eds.), Determinants of Pro Poor Growth: Analytical Issues and Findings from Country Cases, Palgrave Macmillan.
11. Broadman, Harry, James Anderson, Constantijn Claessens, Randi Ryterman, Stefka Slavova, Maria Vagliasindi, and Gallina Vincellete, 2004. “Building Market

- Institutions in South Eastern Europe: Comparative Prospects for Investment and Private Sector Development.” The World Bank: Washington, DC.
12. The American and European Union Chambers of Commerce in Armenia, Joint White Paper, “Reform of Armenian Tax System: The Foreign Investors’ Perspective”, August 2003
  13. Совместная программа Всемирного Банка и Международной Финансовой Корпорации - Консультативная служба по иностранным инвестициям (FIAS), “Оценка административных барьеров для предпринимательской деятельности в Армении”, 2004г.
  14. Robert H. Bates<sup>1</sup>, “Institutions and Development” Journal of African economies, Volume 15, pp. 10–61, 2005
  15. Peter Murrell “Institutions and Firms in Transition Economies”, chapter of the Handbook Of New Institutional Economics, 2003
  16. Eurostat, Statistical regime 4, Armenia, Albania, Macedonia, Macedonia, Bosnia and Herzegovina, Rumania Bulgaria.
  17. International monetary Fund, WEO 2007
  18. Human Development Index, 2006
  19. Doing Business “Comparing business regulations” 2003 – 2006 World Bank
  20. National Statistical Service of the Republic of Armenia
  21. Transition Report, 2006 EBRD
  22. Chapter 3 in World Economic and Financial Survey, World Economic Outlook, “Growth and Institution”. International Monetary Fund, April 2003
  23. “Enlarging the European Union: are the economies of accession candidates ready?”, PWC, EU enlargement barometer 2002